

7(700)
2024

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զիմաստությունն եւ գիրապ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՍՐԱՐԱՐ

Лусарар •

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

• Lusarar

ԺԱՆՆԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ



Ոչ մի ծայն
այլեւս
չի հասնում ինձ
ու չի հասնելու:

Այս համատարած
աղմուկների մեջ
վերստին հայտնվել են
Մարա Մելիքի
անտակ հորի մեջ:

Ես ժամանակի
ցինիկ ստերում

ՀԱՅՐԵՆԱԿԱՆՉ

մի աններելի
միանտությամբ
ու անսթափությամբ
տրվել են
միֆին
իմ անպարտության:

Հիմա մարմինս
բզիկ - բզիկ է,
ավերակներում
իմ շեն գյուղերի
կռնչում է բուն,
վանքիս գմբեթից

հանվում է խաչը,
քերվում նշանն
իմ հավերժության:

Հիմա իմ հոգին
գերեզմանոց է,
ու անպատարագ
բյուր թաղումներում
սուրբ մասունքներն են
իմ զավակների,
որոնք հավատով
կրակ նետվեցին,

հոգիս փրկելու՝
անտեղյակ, որ այն
չնչին գրոշով
ընչաքաղցները
հանձնել են
Նեռին:

Հիմա եղեռն է,
ահավոր եղեռն
հավատի,
լույսի
ու հավերժության: 8

ԱՅՍ ԵՐԿԻՐԸ ՊԱՇԵԼ Է ՊԵՏՔ, ՈՐ «ԱՐՉԱԽԸ» ԶԿՐԿԵՎԻ



Երբեմն ինքս ինձ հարցնում էի՝
որտեղի՞ց ենք մեծով թե փոքրով
ուժ ստանում, որ դիմանում ենք
այդ ամենին, ու երբ հետադարձ
հայացք էի ձգում հայ ժողովրդի

անցյալին, հասկանում էի, որ
դարերն են մեզ պատգամել, որ
ամուր կառչեմք հողից, որը
մեզ սնել, պահպանել է, ու
կառչած էինք՝ հավատալով, որ
կյանքի իմաստը սեփական հո-
ղում ապրելն է, հողի համար
պայքարելն է, մեր արմատները
պաշտպանելն է, մեր գերնպա-
տակը հողը սիրելն է, որը կոչ-
վում է Հայրենիք:

Ցավոք, տառապած էր այդ
մի կտոր հայրենիքը՝ հոգնած
չարիքներից, աշխարհի դավե-
րից... Երանի՜ միայն արտաքին
թշնամի ունենայինք, գոնե կի-
մանայինք, թե որ ուղղությամբ
պետք է դիմադրել:

Մենք ի՞նչ ենք թողնում սե-
րունդներին՝ կորսված Արցախ,

թշնամու «յաթաղանի» տակ կուչ
եկած մայր երկիր, որտեղ բաժան-
բաժան են անում հայրենի հողը,
հայկական գյուղերը, բարձունքնե-
րը, ճանապարհները, որոնք շու-
տով թշնամու համար մի-մի «Հա-
կարիի կանուրջ» են դառնալու, որ
հսկեն հայոց աշխարհի ելունուղը:
Մնում է ասել՝ մեզ երկի՞ր է
պետք, թե՞ արդեն հոգնել ենք Հա-
յաստան ունենալուց, իսկ մենք՝
հազարավոր արցախցիներս,
խեղդվում ենք Արցախի կարոտից,
որ մնաց շան բերանում:

Հիմա ինչպե՞ս է ապրում հայ-
րենագուրկը: Նա իր տեղը չի
գտնում, հյուսնում է միտքը ամեն
օր, ամեն ժամ, ամեն րոպե, թե ին-
չու կորցրեց հայրենի երկիրը...

6

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ՝ ԱՆԱՆՑ ԱՐԺԵՔԻ ՄԱՆՐԱԿԵՐՏ



«Թումանյանը՝
սահմանին» ծրագ-
րի շրջանակում
Հովհ. Թումանյանի
թանգարանն իր-
կանացում է դա-
սախոսական շո-
ջագայումներ սահ-
մանային հա-
մայնքներում: Մեկ-
նարկը տրվեց թան-
գարանի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Ղարախանյանի կողմից՝
«Հովհաննես Թումանյանի ընտանիքը՝ անանց արժեքի մանրակերտ»
դասախոսությամբ: Հայրենիքը սիրում ու փայփայում են նաև արժե-
համակարգ ունեցող բազմաճյուղ ընտանիքներ ծնավորելով. այս գա-
ղափարն է մատուցվում բնակչության հետ հանդիպումների ժամա-
նակ:

Դասախոսական շրջագայումները կշարունակվեն Գեղարքունիքի
և Սյունիքի մարզերի սահմանային բնակավայրերում: 2

2

ՑԱԿԻ ՄԱՍԻՆ ՊԻՏԻ ԽՈՍԵԼ



«Թունելի վերջում միշտ էլ
լույս կա», - արդեն որերորդ ան-
գամ անցնելով Պուշկինի լեռ-
նանցքի թունելով՝ կրկնում են
մտովի: Վանաձոր-Ստեփանա-
վան ճանապարհի խորհրդավոր
հատվածն է՝ 1830մ երկարու-
թյամբ ավտոխճուղային թունե-
լը, որը հաճախակի մնալով
առանց էլեկտրական լուսավո-

րության՝ բացարձակ խավարի
պայմաններում իմ ուղեղում
ակամա զուգորդվում է արցախ-
ցու կարգավիճակի հետ: Փա-
կում են աչքերս: Միևնույն է,
այդպես էլ են զգալու Բազումի
լեռնաշղթայի վրա շողացող
լուսատուին, երբ դուրս գանք
թունելից: Մանկան հրճվանք են
ապրում ամեն անգամ, երբ թու-
նելի վերջում հայտնվում է լույ-
սը: Թոթափում են ծանր մտքե-
րը, և ծնվում է հույսը: Կասեք՝
ի՞նչ հույս. վերադարձի սին
սպասումի՞, մեկ այլ վայրում
երջանիկ ապագայի՞: Երկուսից
և ոչ մեկը: Միանգամայն իրատե-
սական և այս պահին, ըստ իս,
ամենամահաբաժնի թուժվելու
հույսը: Մեր սերն առ Արցախ ցա-
վեցնող է: Ինչքա՞ն ցավ պատ-
ճառեց մեզ այդ սերը, ինչքա՞ն
անմարդկային փորձություննե-
րի ենթարկեց 35 տարի... Չպո-

կեցինք սրտից ու չենք էլ անի,
քանզի առանց այդ սիրո կկորց-
նենք ինքներս մեզ: Բայց ցավին
դիմանալ էլ չի լինում: Պիտի սո-
վորենք սիրել առանց հալումաշ
անող ցավի: Ասում են՝ ցավի
մասին խոսել է պետք: Եկեք խո-
սենք: Իսկ թե ցավի բարձրաձայ-
նունը ողբ եք համարում, թերթեք
ու առաջ անցեք:

Հայրենիքի հանդեպ ցավոտ
սիրո պատմություններով կկիս-
վեն մեզ հետ տարիներ շարու-
նակ կողք կողքի ապրած մեր
հայրենակիցները: Մենք ոչ մեկի
առաջ արդարանալու փորձ չենք
անելու: «Ինչու» և «ի՞նչպես»-ը
կթողնենք ամենագետ քաղա-
քագետներին: Կփորձենք այս
կերպ ազատվել ցավից՝ թողնե-
լով միայն սերը:

3, 7

ՈՒՍՈՒՅԻՉԸ՝ ԵՉԱԿԻ ԴԵՄՔ ԳՊՐՈՅՈՒՄ

Փառատենչ ու փառամոլ սերունդը
չի կարող կանգնել հայրենապահա-
նության դիրքերում. պետք է հենց այս
ուղղությամբ գործունեություն ծավալի
մանկավարժների հզոր բանակը՝ ան-
կոտրում կամքով սերունդ ունենալու
ակնկալությամբ: Պատմությունն
ապացուցել է, որ հայրենիքները կոր-
ծանվում են թույլ ու հեղձ անհատների
կողմից: Ուրեմն ուժեղ սերունդ ունե-
նալը ազգի պահպանման երաշխիքն է,
ու այդ սուրբ գործի առաքյալը ուսու-
ցիչն է: Նրա ուսերին է դրված ազգային
բովանդակություն ունեցող հսկայա-
կան մի բեռ, և նա, ով չի կարող արժանապատվորեն տանել այդ բեռը, պետք է ժամ
առաջ լքի շարքը:

Այսօր ավելի քան երբևէ մեզ անհրաժեշտ է կրթել ու դաստիարակել այնպիսի
սերունդ, որն ի գորու կլինի լուծելու մեր ազգային խնդիրները: Խնդիրներ, որ հիմ-
նահատակ կարող են կործանել մեր՝ դարերի ընթացքում կուտակված լավագույն
ավանդույթներն ու ժառանգությունը, առանց որի կարող են փոշիանալ մեր ազգա-
յին պատկերացումները, որ դարեր շարունակ մեզ հայ են պահել: 3

3



ՀՈՎԿԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ՝ ԱՆԱՆՑ ԱՐԺԵՔԻ ՄԱՆՐԱԿԵՐՑ

Լուսինե ՂԱՐԱՆՍՆՅԱՆ
հ. գ. թ., դոցենտ,
Յովհ. Թումանյանի
թանգարանի տնօրենի ԺԴ

21-րդ դարի հարավսկզբին և գրեթե անվերահսկելի պայմաններում փոփոխության են ենթարկվում նաև ընտանիքի՝ որպես հասարակական կարևորագույն ինստիտուտի կառուցվածքը ու դիմագիծը: Այսօր էլ շարունակվում են փոփոխվել ընտանեկան շատ արժեքներ, ընտանիքին ներկայացվող պահանջներ, դերեր ու դերային սպասումներ, միջանձնային հարաբերությունների առանձնահատկություններ և ավանդույթներ:

Հայ ընտանիքն իր դարավոր քաղաքակրթության մեջ ապրել է զարգացման երկար գործընթաց և համարվում է ընտանեկան ամենաուժեղ նախորինակներից մեկը: Այնուհանդերձ, աշխարհաքաղաքական փոփոխությունները իրենց բացասական ներգործությունն են ունենում նաև հայ ընտանիքի վրա: Իրապես փոխվել են միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունները, ծնողափոխության ու զավակասիրության որակները, ընկերային դերերը, հոգեբանական բնութագրերը:

Ո՞րն է ընտանիքի այն օրինակելի տիպարը, որ կարելի է ուսանելի դարձնել սերունդների համար: Այս առումով ուշագրավ է Հովհաննես Թումանյանի ընտանիքը՝ կայուն համակարգի, նրանում պահպանվող և ձևավորված ավանդույթների ու սովորույթների, միջանձնային հարաբերությունների առանձնահատկությունների առումով, որոնց մասին տեղեկանում ենք Թումանյան ընտանիքից պահպանված մասնակագրության և այլ վավերագրերի հարուստ ժառանգության էջերում, Թումանյանի և նրա զավակների ու ժամանակակիցների հուշագրություններում:

Բազմանդամ ընտանիքն, անշուշտ, նաև շատ հոգսեր էր դնում Յովհ. Թումանյանի ուսերին, բայց բանաստեղծը արարչական հոգատարությամբ, անսպառ սիրով, համբերությամբ ու քրիստոնեական խոհեմությամբ էր տանում մեծ ընտանիքի հոգսերը: Կինը՝ Օլգա Թումանյանը, նույնպես ժայիք էր երեսին ու սիրով էր հոգում ոչ միայն մեծ ընտանիքի կարիքները, այլև բանաստեղծ ամուսնու քնահաճույքները: Մարտիրոս Սարյանի հուշերում ընթերցում ենք. «Հմայիչ էր Յովհ. Թումանյանը որպես բանաստեղծ և մարդ: Նա իր մեջ կրում էր ժողովրդի լավագույն գծերը. գրականության մեջ սեր դեպի ժողովրդական ստեղծագործությունը, իսկ կյանքում լայն հյուրասիրություն և սեր դեպի իր ընտանիքն ու երեսուները»:

Ընտանիքում տիրող կարգ ու կանոն, ընտանեկան հավաքույթներ ու միջոցառումներ, որոնք միջանձնային շփումների մշակույթ ձևավորելուց զատ՝ նաև զեղազիտական կրթության և դաստիարակության միջավայր էին ստեղծում, սրտառուչ

և գործվալից վերաբերմունք մեկը մյուսի նկատմամբ, նամակագրության, ընտանեկան խաղերի, ընթերցանության ու ստեղծագործելու մշակույթ: Կարգ ու կանոնին հետևելը գալիս էր հայր Հովհաննես Թումանյանից. կարգ ու կանոն ամեն ինչի մեջ՝ սկսած մանրուքներից:

Հյուրասիրությունն այս մեծ ընտանիքի ամենաընդգծված առանձնահատկությունն էր: Ուսուցիչական-ավանդական հյուրասիրություն էր, որ սովորաբար իրականացվում էր Հովհաննես Թումանյանի նախաձեռնությամբ և Օլգա մայրիկի անտրտուն ու սիրալի աշխատանքով: Անշուշտ, հյուրասիրության՝ ծիսակարգի նմանվող արարողության մեջ ուրույն տեղ ունեին նաև Թումանյանի դուստրերը: Թումանյան ընտանիքի շատ ու շատ հայտնի հյուրեր հետագայում իրենց հուշերում անդրադարձել են հատկապես ընտանիքի հյուրընկալությանը: Չապել Եսայանի հուշերում ընթերցում ենք. «Անկա բազմանդամ ընտանիքի տեր էր, և ամոր կինը, տիկին Թումանյանը, զարմանալի համբերությամբ և սիրալիությամբ ընդառաջ կերթար իր ամուսնույն ցանկություններում: Տանը մեջ աղախին և ծառայող չի կար: Կինը և աղջիկները կը ստանձնեին տնային բոլոր գործերը և անվերջ հյուրերու սպասարկելու անսպառ գործը: Եվ ամենքն ալ տանը մեջ մինչև ամենն փոքրերը ժպտուն էին և սիրալի հայրիկին հյուրերու հետ: Այցելուներն ոմանք կ'երթային տիկնոջը մոտ, պատշգամբ կան նույնիսկ խոհանոցը, ոմանք Նվարդի մոտ, որ այդ շրջանին ինձ մեկանադձոտ կը թվեր և կ'առանձնանար իր սենյակը, և ոմանք խաղ կ'ընեին փոքրերու հետ: Ծիծաղը և ուրախ կանչերը կը բարձրանային պատշգամբեն, հարակից սենյակներեն... Ինչքան հյուրընկալ և քաղցր էր Յովհ. Թումանյանի տունը այդ օրերուն»:

Նամակագրության մշակույթը՝ իբրև ընտանեկան ամրագրված արժեք, վկայում է այդ մեծ ընտանիքում տիրող համերաշխության և միջանձնային խոր ու ամբողջանվեր շփումների մասին: Նվարդ Թումանյանի՝ հորն ուղղված նամակների լեցուն են գործվածքով, սրտացավությամբ ու անսահման սիրով: Կարևորելով հոր նամակագրության դերը՝ Նվարդ Թումանյանը նրան ուղղված նամակներից մեկում գրում է. «Երեկ ստացաք նամակդ, և դա այնքան ուրախացրեց մեզ բոլորիս: Անձամբ ինձ համար դա ամենաթանկ նվերն էր, չէ՞ որ դու գիտես, թե որքան թանկ են մեզ համար քո խոսքը, քո գուրգուրանքը, խորհուրդները և մեր մտերիմ գրույցը: Հայրիկ, խոնարհաբար խնդրում են, ավելի հաճախ նամակներ գրիր, եթե շաբաթը մեկ անգամ ոչինչ, բայց աշխատիր հնարավորինս մանրամասն: Ավելի մանրամասն գրիր քո տրամադրության մասին, հոգեվիճակդ մասին, գործիդ, զբաղմունքիդ մասին - մի խոսքով, ամեն ամենի մասին»:

Թումանյանի ընտանիքի կարևորագույն արժեքներից էր ընթերցանության մշակույթը: Այս բազմանդամ ընտանիքում կրթական միջավայրը ձևավորված էր ակամա, քանի որ Թումանյանի ընտանիքի հյուրերն էին ժամանակի հայտնի մտավորականները, գրողներն ու մշակույթի գործիչները. «... Եվ ամենափոքրիկը Հովհաննեսի զավակներից՝ Սեդան (ամենափոքրը՝ Թամարը, այդ ժամանակ ծնված չէր) անգամ ազդում էր ոչ միայն իր քնքշասիրտ և սիրառատ հայրիկից, այլև գրական այն մեծերից, որոնք նստում էին նրա հետ միասին մի սենյակում: Ամենքն ապրում էին գրականության շահերով ու հարցերով, ամենքը ներդաշնակորեն միաձուլվում էին մի գրական ընտանիքի ամբողջության մեջ»:

Ընդունված էր տան պատերին



իմաստուն մտքեր և մակագրություններ փակցնելը: Օրինակ, սեղանատանը փակցված էին. «Իմաստությունը և մաքրությունը գեղեցկության հիմք են: Քո սրտի մեջ է փայլում քո բախտի աստղը» (Շիլլեր): «Մեր բախտը մեր ներսն է, դժբախտությունը՝ դուրսը» (Բյուսոն), «Քո մտքերը, քո խոսքերը և քո գործերն էն կենդանի քարերն են, որոնցից շինած է քո հոգին»: Այս մակագրությունները ժամանակի ընթացքում փոխվում ու թարմացվում էին, և սա ևս բարեկրթության միջավայր էր ստեղծում՝ ուղեծրեր հղելով ոչ միայն տան անդամներին, այլ նաև եկող- գնացողներին:

Ուշադրության և գնահատանքի արժանի են նաև Թումանյանի ընտանիքի ստեղծած խաղերը և ընտանիքում խաղեր կազմակերպելու մշակույթը: Ցայսօր պահպանվել և սերնդեսերունդ փոխանցվում են Թումանյանի ընտանիքի ստեղծած խաղերը, որոնք իրենց բնույթով հայրենաստանաչողական են: Ընտանիքում ընդունված էր միասին խաղալը, խաղերն ստեղծվում էին զավակների օգնությամբ: Միասին ընթրել, միասին խաղալ, միասին զբոսնել. սա խմբային արժեքների, խմբային մշակույթի, խմբային պատասխանատվության ու մտածողության ձևավորման հրաշալի միջավայր էր ստեղծում: Եվ եթե դիտարկելու լինեք ժամանակակից մանկավարժության ոճերի համատեքստում, ապա դաստիարակության գործընթացն այս մեծ ընտանիքում ժողովրդավարական բնորոշ նկարագիր ուներ, բռնության կամ պար-

տադրանքի որևէ դրսևորում չկար: Օրինակ, ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետք է կերակրվեր ըստ իր ցանկության: Որդիներից Արեգը միս չէր ուտում՝ կենդանիներին մորթելը համարելով մահացու մեղք՝ նրա համար առանձին ճաշ էին պատրաստում:

Ընտանիքի ներդաշնակ միջավայրի, ջերմ և հոգածու մթնոլորտի ձևավորման գործում նշանակալի էր Օլգա Թումանյանի դերը: Սիրո և փոխըմբռնման մթնոլորտում ծնվեցին ու դաստիարակվեցին նրանց տասը զավակները: Օլգա մայրիկը առանձնահատուկ սիրով ու նախանձախնդրությամբ էր պատրաստվում զավակների տարեդարձին (ընտանեկան արխիվում պահպանվել է նրանց ծննդյան օրերի տվյալներով Օլգայի կողմից կազմ-

ված ֆայանի և այլոց համար: Այդ մասին նա իր նամակներից մեկում գրում է ամուսնուն. «Ինձ շատ է ծիծաղեցնում, որ Շանթը մինչև քո զալը մնալու է, երկի ինձ պահելու կամ հսկելու են բերել»: Թումանյանի ընկերաբարեկամները զարմանում էին Օլգայի մշտազվարթ հյուրընկալության և համբերության վրա. ժամանակակիցները հուշերում նրան կատակով անվանում էին «նահատակ», իսկ Թումանյանին՝ «ընտանեկան աղետ»:

Տասը զավակների կրթվելու, աշխատելու, ազգային-հանրային կյանքին նվիրվելու, արժեքներ ստեղծելու իրողությունը ևս հավաստիքն է այս ընտանիքում կրթության արժևորման ու խորը իմաստավորման: Այս ընտանիքի պատմությունը պատկանում է յուրաքանչյուրիս, որովհետև նրանցից յուրաքանչյուրը դատապարտված էր գտնվել բարիկազմների վրա: Չավակներն էլ հոր պես ժողովրդի ճակատագրով և մարդկության ցավով տառապող անհանգիստ ու մարդատեր կերպարներ էին: Նվարդ Թումանյանը հոր հետ 1915թ. էջմիածնում խնամում էր արևմտահայ որբերին, Արտավազը Թումանյանը՝ Վանի վերջին լիազոր պարետը, գոհվեց արևմտահայ գաղթականներին փրկելու, նրանց անվտանգ տեղահանությունը ապահովելու ընթացքում (1918): Անհատի պաշտամունքի տարիներին Համլիկը (1937) և Արեգը (1938) գնդակահարվեցին, իսկ Մուշեղը մահացավ սրտի կաթվածից (1938):

Ասում են՝ Օլգա մայրիկը չափազանց շատ էր հյուսում: Նա ժամերով ճաղերով գործվածքներ էր անում: Դուստրերը հաճախ ստիպված էին լինում քանդել գործվածքները և նրա մոտ նոր թելերի կծիկներ դնել: Հավանաբար նա գործում էր կորստի վիշտը՝ լուռ, սրտաթեկ և վիատ, երբևէ չփաթաթելով որևէ մեկին:

Վաղաժամ կորցնելով ամուսնուն, չորս որդիներին, դստերը՝ Անուշին և երկու հասուն թոռներին, հաղթահարելով հոգեկան ծանր տառապանքները՝ Օլգան չչարաքամ, ողբերգական կորուստներից հետո անգամ համախմբեց ընտանիքին՝ պահպանելով օջախի ջերմությունը, միասնականության ոգին: Ավելին, նա կարողացավ խնամքով պահել ու պահպանել, ապա Թումանյան թանգարանին հանձնել այն ամենը, ինչ կապված էր Թումանյանի հետ՝ արխիվը, աշխատասենյակը, գրադարանը, և հետագայում պայմաններ ստեղծեց դրանց պահպանման համար՝ երևանում բանաստեղծի թանգարանը հիմնադրելիս: Հաստատականությունը, զավակությունը, հավասարակշռվածությունը, քրիստոնեական խոհեմությունը, հոգատարությունը ու բարեկրթությունը ամբողջացնում են Օլգայի՝ որպես հայ ընտանիքի մոր անզուգական, եզակի և դասական կերպարը:

... ՍԱԿԱԿ ԵՆ ԸՆՏՐՅԱԼՆԵՐԸ

ՈՒՍՈՒՅԻՉԸ՝ ԵՉԱԿԻ ԴԵՄԵ ԴՊՐՈՅՈՒՄ

Գիտակցական կյանքիս չորս ու կես տասնյակից ավելի տարիները նվիրված են եղել հայկական Արցախի դպրոցում կրթվող ու դաստիարակվող մատաղ սերնդին հայ ու հայեցի պահելու սուրբ առաքելությանը:

Մանկավարժի մասնագիտությունն ինձ համար եղել է օդ ու ջրի պես անհրաժեշտ մի բան: Դրանց պակասից միշտ շնչահեղձ են եղել բառիս անհնախոր իմաստով, և ոգևորվել ու փառավորվել է հոգիս, երբ սնվել են այդ օդ ու ջրով: Այլ կերպ պատկերացնել հնարավոր չէր, քանզի դա ինձ համար կենսական պահանջներ է եղել: Սովորողներին առաջնորդել են ոչ միայն գիտության բարձունքները նվաճելու բարդ ու դժվարին ուղիներով, այլև կյանքը լավագույն ճանաչելու ու մարդկայնորեն ապրելու գաղափարով: Ու շատ երջանիկ ակնթարթներ երբեմն ապրել, երբ իմ սանձերը շատ լուրջ ու պատասխանատու մրցույթներում առաջնակարգ տեղեր են զբաղեցրել ու մրցանակներ շահել: Դա եղել է իմ ամենամեծ հպարտությունը, երբ սանձերիս աչքերում տեսել են արևի ցուլացումը:

Երբեք չեմ ձգտել փառքի, միշտ մնացել եմ մասնագիտությանս հավատարիմ, կոչմանս՝ արժանի: Եռանդուն աշխատել եմ սանձերիս հետ, բերկրել նրանց հաջողություններով: Արձափս լավագույն հատուցումը եղել է նրանց փոխադարձ սերն ու համակրանքը:

Կոչումների ու պարգևների տարափուն թյուրիմացաբար հայտնված անարժանների (թող ինձ ներքե արժանավորները) անունները միմիայն տարակուսանք են առաջացրել մոտս: Տեսնելով որոշ պարզատրվողների՝ Նազարի բախտի «ինտելիգենտ» դրսևորումները՝ միշտ մտածել եմ՝ ի՞նչ էլավ է, որ ես այդ շարքում չկամ... Միշտ ատել եմ այն գնահատանքը, որը կատարվում է ոչ թե նվիրումի, զոհաբերության, այլ ծանոթ-բարեկամների, նաև սիրուն աչքերի համար: Պարգևներն ու կոչումները չեն որոշում իրենց գործին անմասնորդ նվիրված ու անանձնական կյանքով ապրող մանկավարժների ճակատագիրը, որոնք իրենց հոգեկան խաղաղությունը գտնում են միմիայն նվիրվելու ու զոհաբերումի մեջ: Նրանց հավատամքը մեկն է՝ լույս սփռելու առաքելությունը՝ զեղծ միջավայրի աղտեղություններին:

Արված գործն ու գնահատանքը պետք է ներդաշնակ լինեն, որ չխամրի կյանքի լույսը:

Տարիները չեն կարող մշուշել այդ գործունեության արգասիքները. ավելին, նրանք սրբագործ են դրանք՝ դարձնելով այն էլ ավելի մաքուր ու բյուրեղյա ճշմարտություն: Եթե շիտակ ու անխախտ են անցել այդ ճանապարհը, ուրեմն թողել են սերունդների մի հսկայական բանակ, որոնցով ներշնչվել ու ոգևորվել են, նրանց ազնիվ հոգիներում առողջ հունդեր շար տվել հավատարիմ սերնդացանի պես, ուրեմն շարունակաբար ապրում են նրանց հանապազօրյա գործունեության, սրտի հեքի ու տրոփյունի, խիճի ու վշտի, լուսավոր հեռանկարի պատկերներում: Դու հավետ կաս նրանց բոլոր գործողություններում, քանզի այդ կյանքի չափանիշները գրվել են հենց քո ձեռքով:

Դպրոցը մի դարբնոց է, որտեղ պետք է աշխատեն միմիայն հմուտ «դարբիները»՝ օժտված մարդկային

ամենավեհ հատկանիշներով ու այնպիսի արժեքահամակարգով, որը չնչին չափով անգամ կասկած չհարուցի:

Այսօր դպրոցին անհրաժեշտ են հենց այդպիսի անհատներ, որոնք գիտելիք հաղորդելուց զատ մատաղ սերնդից կարող են կերտել միայն հայրենապաշտ ու նվիրյալ քաղաքացիներ, որոնց մտապատկերում անգամ տեղ չեն գտնի հոռի մտքերն ու կասկածները, որոնք ցանկացած պահի պատրաստ կլինեն անվարան պայքարի նետվել, միայն թե հող հայրենին անաղարտ մնա: Այս փաստը իրողություն է բազմադարյա մեր մաքառումների պատմության էջերի հանգամանակից ուսումնասիրության արդյունքները հաշվի առնելով:

Այսօր ավելի քան երբևէ մեզ անհրաժեշտ է կրթել ու դաստիարակել այնպիսի սերունդ, որն ի գորու կլինի լուծելու մեր ազգային խնդիրները: Խնդիրներ, որ հիմնահատակ կարող են կործանել մեր՝ դարերի ընթացքում կուտակված լավագույն ավանդույթներն ու ժառանգությունը, առանց որի կարող են փոշիանալ մեր ազգային պատկերացումները, որ դարեր շարունակ մեզ հայ են պահել:

Փառատենչ ու փառամոլ սերունդը չի կարող կանգնել հայրենապահպանության դիրքերում. պետք է հենց այս ուղղությամբ գործունեություն ծավալի մանկավարժների հզոր բանակը՝ անկտրում կամքով սերունդ ունենալու ակնկալությամբ: Պատմությունն ապացուցել է, որ հայրենիքները կործանվում են թույլ ու հեղձ անհատների կողմից և պահպանվում՝ ուժեղների միջոցով: Ուրեմն ուժեղ սերունդ ունենալը ազգի պահպանման երաշխիքն է, ու այդ սուրբ գործի առաքյալը ուսուցիչն է: Նրա ուսերին է դրված ազգային բովանդակություն ունեցող հսկայական մի բեռ, և նա, ով չի կարող արժանապատվորեն տանել այդ բեռը, պետք է ժամ առաջ լքի շարքը:

Տարիներ շարունակ՝ մանկավարժական գործունեությանս զուգահեռ, գիտական-մանկավարժական հոդվածներով ու գեղարվեստական գործերով հանդես եմ եկել Արցախի «Լուսարար» կրթամշակութային թերթում (անունն ինքնին շատ բան է ասում իր լուսառաք գործունեության մասին)՝ լավագույնս ծուսաբանելով դպրոցի խնդիրներն ու հաջողությունները՝ միաժամանակ խորհուրդ-պատգամներ հղելով երիտասարդ ու սկսնակ մանկավարժներին: Ստորև ներկայացնում եմք դրանցից մի քանիսը, որոնք օգտակար կլինեն նորաթուխ ուսուցիչների համար:

• Կարողացիր կյանքը նվիրաբերել երեխաներին. դա է իսկական երջանկությունը: Միթիր նրանք քո երեխաների պես, քանի որ հենց այդ առանձնահատուկ աշխարհում կգտնես քո իրական հեքիաթը, հոգուդ խաղաղությունը:

• Աշխատիր գրավիչ դարձնել քո առարկան. արդյունքում կծնվի այն մեծ սերը, որ աննկատ տանում է դեպի քեզ ու քո առարկան:

• Դասարան մտիր միշտ թարմ նորություններով ու պատեհ առիթով մատուցիր սաներիդ. դա մտան է լավ նշանառուի խփած զնդակի, որ անպայման հասնում է նշանակետին: Այս դեպքում միշտ սպասված ու ցանկալի կլինեն սովորողներին:

• Երբեք թույլ մի՛ տուր քեզ պարսավել քո գործընկերոջը (դա կլինի քո, թե այլ մասնագիտության ու

սուցիչ): Դրանով կօտարես սաներիդ քեզանից, և կծնվի անվստահություն մարդու և մարդկային հանդեպ:

• Դասարան մտիր գիտելիքներով զինված: Երբ աշակերտին դուրս ես բերում դասագրքային խիստ մեղ շրջանակներից և տանում ես գիտելիքների խորհրդավոր ճանապարհով, ինքնին դառնում ես երանգավաճ մի փարոս, որի շողերը ձգում քաշում են բազում սրտեր: Այստեղից էլ՝ խոր ակնածանք քո և դասավանդածդ առարկայի հանդեպ:

• Երբեք հիշաչար մի՛ եղիր: Մի՛ մոռացիր, որ երեխան իր արարքներով երբեմն կարող է նույնիսկ վիրավորել քեզ: Աշխատիր, չվկայակոչելով այդ արարքը, նրան մղել այնպիսի գործողությունների, որ ինքը հասկանա ու զնահատի իր սխալ քայլը, և ավելին, դու նրա համար կդառնաս լավ մարդու իդեալ:

• «Դժվար» երեխաների հետ մի՛ լարիր հարաբերությունները. ընդհակառակը, նրա մեջ գտիր դրական ու արժեքավոր գծեր, բյուրեղացրու դրանք, և հետևում կմնան վատն ու հոռի դրսևորումները:

• Հետաքրքիր դարձրու մանկավարժական առօրյադ. խորհիր ու կցտնես բազում միջոցներ, որոնք կհետաքրքրեն ու կգրավեն սաներիդ: Կթռչի ժամանակը փետուրի թեթևությամբ. դրանից կշահեք երկուսդ էլ՝ դու և սաներդ:

• Առօրյա հոգսերով ծանրաբեռնված՝ մի՛ մտիր դասարան: Վատ տրամադրությունը լարում է ճնշում է երեխաներին, իսկ մնան մթնոլորտում հույզն է կառավարում միտքը: Անընդհատ հարստացրու բառապաշարդ, որպեսզի անսխալ մատուցես ասելիքդ. գեղեցիկ խոսքը (ոչ խրթին) տպավորում է ունկնդրին, կարծիք կազմում քո մասին: Դա միևնույն ժամանակ խոր հարգանք կծնի մայրենի լեզվի ու նաև քո անձի հանդեպ:

• Երբեք խոսքդ ու գործդ մի՛ հակադիր իրար: Եթե ուզում ես, որ սովորողները միշտ հավատ ընծայեն առ քեզ, ուրեմն կյանքում առաջնորդվիր «ինչպես որ ես» սկզբունքով: Հենց սաներդ վրիպում նկատեն քո վարվելակերպում, իսպառ կկորցնես վստահությունդ նրանց աչքում:

• Եղիր հայրենապաշտ ու ազգասեր: Քո առօրյա գործերով վարակիր նրանց: Մանկավարժի առաջին սուրբ գործը հայրենասեր ու ազգասեր սերունդ դաստիարակելն է՝ անկախ նրանից, թե ինչ առարկայի մասնագետ ես:

• Սովորողներին շերտավորելիս շատ զգույշ ու նրբանկատ վարվիր, որ նրանք չհայտնվեն ծայրահեղ բևեռներում: Մի՛ բևեռացրու ո՛չ լավին, ո՛չ վատին: Նրանք իրենց մեջ կտան են երկուսն էլ:

• Դասարան մտնելիս ունեցիր անպայման քո վախճան ու սուրը. վախճանով պաշտպանվիր սովորողների հարցադրումներից և սրով կտրիր չիմացության պատռելը: Անզեն մանկավարժը միշտ «պաշարման» մեջ է:

• Ժամերի հետ փոխիր քո տարիքը: Եղիր լեզու գտնող: Կրտսերների մոտ ես մտնում՝ դարձիր կրտսեր, ավագներին ես այցելում՝ վարվիր հավասարը հավասարի հետ սկզբունքով: Բայց երբեք մի՛ իջիր քո մակարդակից:

• Տեղեկացիր աշխարհի անցուդարձին, որ երեխաների մոտ հիմար կացության մեջ չհայտնվես: Վարիր հետաքրքիր ու աշխույժ դասեր: Ան-

զոր ու անկարող ուսուցիչը մնան է զինաթափ զինվորի, որ փորձում է մարտ վարել:

• Քայլերիդ մեջ եղիր զուսպ ու հավասարակշռված. քեզ հարյուրավոր աչքեր են հետևում: Մի փոքրիկ վրիպումը կարող է ճակատագրական լինել հեղինակությանդ համար:

• Հիշիր. դասը, դպրոցը, գիտելիքը «ախպերություն» չեն հանդուրժում: Սովորողների տարիքի ու գիտակցության աճման արդյունքում դու կհայտնվես Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վեպի հերոսների ողբալի կացության մեջ:

Մանկավարժությունը վերանորոգում ու կարկատաններ չի հանդուրժում. այն միշտ պահանջում է նորն ու թարմը:

Թռչակի անցնելը (պարտադրել էին) ինձ համար մի մեծ ողբերգության սկիզբ էր... ես դեռ շատ բան ունեի տալու: Մխիթարությունս գտա «Լուսարար»-ի էջերում հաճախակի հանդես գալու հնարավորության մեջ: Դրանց մեջ խոր վերլուծություններ կային նաև բազում տարիների իմ գործունեության, արած-թողածի մասին: Հետագա տարիներին էլ եմ ժամանակ առ ժամանակ զբաղվել մանկավարժական գործունեությամբ հարազատ դպրոցում, հետո նաև Ասկերանի միջնակարգ դպրոցում՝ փոխարինելով բացակա ուսուցիչներին:

Թռչակի անցնելուց հետո էլ շարունակել եմ մնալ երիտասարդ ուսուցիչների բարի խորհրդատուն ու անկեղծ ընկերը՝ իմ գիտելիքները կիսելով նրանց հետ: Նրանց գանգերում պատասխանելով ինձ համար մասնագիտական իսկական տոն էր:

Շրջանային բազմաթիվ միջոցառումներին (օլիմպիադա, ասմունքի մրցույթ և այլն) մասնակցելու հրավերներ հաճախ եմ ստացել ու սիրով կատարել պարտականություններս: Տեղահանվելուց հետո, երբ մի կերպ դուրս եկա հոգեկան ծանր մղձավանցից, նորից ակտիվ գործունեություն սկսեցի ծավալել. մասնակցում եմ տարբեր միջոցառումների և դրանք լուսաբանում վերածնված «Լուսարար»-ի էջերում:

Այսօր մտահոգությանս չափ ու սահման չկա. Երևանի դպրոցներ հաճախող հարազատներիս պատմություններից ելնելով՝ ուսում ու դաստիարակություն չկա այնտեղ, պատասխանատու մանկավարժները շատ նվազ թիվ են կազմում: Իսկական Մովսես Խորենացու «Ողբ»-ի մեջ առկա իրականությունը. «Ուսուցիչները՝ տխմար ու ինքնահավան, իրենց իրենցից պատիվ գտած և ոչ Աստուծուց կոչված... Աշակերտները՝ սովորելու մեջ ծույլ...»:

Այս ամենի պատճառն այն է, որ արդեն քանի տարի խելացի աշակերտները գիտության այլ ճյուղեր են ընտրում (տնտեսագիտություն, ՏՏ, իրավաբանություն), իսկ թույլ աշակերտները՝ մանկավարժությունը. և դպրոցի ներկայիս անմխիթար վիճակը:

Տեխնիկական բազում հնարավորությունները պետք է միայն կողքից լրացնեն սովորողների գիտելիքները և չդառնան հիմնական միջոցը: Դպրոցում ուսուցչի խոսքը պիտի մնա այն եզակի միջոցը՝ կենդանի ու տպավորիչ, որը կներգործի աշակերտի մտքին ու սրտին: Կենդանի շփումը անփոխարինելի է ուսուցման մեջ:

Սուրբյա ԴԱԶՈՒՅԱԼ

ՑԱԿԻ ՄԱՍԻՆ ՊԻՏԻ ԽՈՍԵԼ

Մաս առաջին ԱՅԳԻՆ

«Այգիս նեղացած է ինձնից», - մի օր ասաց Լիանան՝ մեր ծանոթությունից շատ ժամանակ անց:



«Ի՞նչ այգի», - հարցրեցի՝ նկատելով նրա հանգիստ տոնի տակ թաքնված անհուն թախիծը: Լիանան ընդհանրապես միշտ խոսում է հանգիստ, առանց դժգոհության ու պոռթկումների: Հենց այդ պատճառով բավականին ուշացումով իմացա նրա ապրած ողբերգության մասին, և այն էլ՝ ուրիշներից (բռնազարթոցից հետո ում հետ էլ ՀՀ-ում ծանոթանալիս, անպայման կպարզվեր, որ հայրենիքում ընդհանուր ծանոթներ ունեինք):

Իսկ այգին 3000 պարզապես ծառեր ուներ: Լիանան ու Վահեն բարեկեցիկ ապագայի պլաններ էին մշակում՝ արցախյան կենտրոնից շրջվելով այգին: Անկախ եղանակային պայմաններից, նույնիսկ եթե ծյուն էր եկել, Վահեն այցի էր գնում իր այգուն: Հայրենիքի հողի ու ջրի կենացը առաջինն էր բարձրացնում ընտանեկան հավաքույթների ժամանակ: Ջարձանում էր, երբ մարդիկ լքում էին երկիրը: Ամեն կերպ ջանում էր նրանց ետ պահել այդ ստեղծը. «Ի՞նչ կա այնտեղ, որ մենք չունենանք»: Ինքն ամեն ինչ էլ ուներ երջանիկ լինելու համար: Սիրասուն մայր, կին ու 3 երեխա, հանուն որոնց պատրաստ էր սարեր շուռ տալ: Ու շուռ տվեց: Ֆինանսների նախարարության իրավաբանական բաժնի պետ Վահե Վաչագանի Մելքոնյանն առաջիններից մեկը գեներ ձեռքն առավ, երբ իր պաշտելի հայրենիքը զգաց դրա կարիքը:

44-օրյա պատերազմը նշան էր բռնել նաև Լիանայի ընտանեկան երջանկությանը: Վերջին անգամ ամուսնու հետ հաջողվեց կապ հաստատել հոկտեմբերի 8-ին: Միայն ամիսներ անց իրենց պիտի իմանային, որ հոկտեմբերի 10-ին Հայդուբի Քոչքեյ գյուղում, հայտնվելով շրջափակման մեջ, Վահեն ու իր գիտակիցները միացան անմահների բանակին:

Դժոխքը, որի միջով անցավ ընտանիքը, Վահեի մասին գոնե որևէ տեղեկություն ստանալու հավերժություն թվացող ընթացքում, ծանոթ է հազարավորներին: Կրտսեր դուստրն ընդամենը 3 տարեկան էր: Ինչ էլ նշանակում մանկահասակ երեխաներին միայնակ ոտքի կանգնեցնելը՝ Վահեի մայրիկն ամենքից լավ գիտեր: Վահեն ընդամենը մեկ տարեկան էր, երբ կորցրեց հայրիկին: Նրա ու քրոջ համար արժանապատիվ կյանք ապահովելու բեռն ամբողջովին մնաց տիկին Ռիտայի փխրուն ուսերին: 7

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ «ԵՌՅԱԿ ՄԻՈՒԹՅՈՒՆ»

ՃԱԿԱՏԱԳՐՈՎ ՆՄԱՆ... ՄԻԱՍԻՆ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

1

Վաղուց էի նախատեսել Գյումրիի գնալ: Եվ ահա վերջին օրերին հարցերը խտացան շուրջս՝ ե՞րբ, ինչու՞, ո՞ւմ մոտ, ո՞վ է նա, քանի՞ օրով... Ի պատասխան այդ հարցերի՝ ես խոսում էի ՆՐԱ՝ ԳՅ Վաստակավոր մանկավարժ, պատմության ուսուցչուհի Ռուզաննա Կիրակոսյանի մասին, որի հետ ծանոթացել էի ՖԲ հարթակում, մի հրաշալի կերպար, որի հրավերը վաղուց էի ընդունել՝ խոստանալով լինել իր տանը՝ այցելելով Գյումրի՝ բնակչության մեծությամբ Հայաստանի երկրորդ քաղաքը:

Նա առաջինն էր, որ ամիսներ առաջ տեսավ ուշանում է մեր հանդիպումը, հենց ինքը եկավ Երևան, ինձ հանեց «տնից», որ Արցախի կորստից, մարդկային զոհերից, մեր տարած աղետներից հետո մի քիչ ուշքի գամ:

Առաջին անգամ եղա Ավ. Իսահակյան, Հովհ. Շիրազի հայ դասական գրողների, հայտնի դերասան Սիեր Սկրտչյանի ծննդավայրում: Ակնածանք ունեցա, մեծագույն հպարտություն...

Դեռ ճանապարհին հայացքս ուղտերի քարավան էր փնտրում «օտար, ամայի ճամփեքի վրա», երբ տեղ հասա, քաղաքում փնտրում էի իր կուլայով ջուր ծախող փոքրիկ տղային: Եվ համով-հոտով ֆիլմերի որքա՞ն դրվագներ երևացին աչքիս...

Առաջին անգամ այցելեցի Գյումրի, որն ինձ երևացել է նաև իմ ՖԲ ընկերների ծննդավայրով: Ես նրանց աչքերով նայեցի քաղաքին՝ ժպտադեմ ու թախծալից:

Գոհար Բաղասյան, սիրելիս, իմ բարի ու հարազատ, այս հեռվից՝ Գյումրիից եմ տեսնում ՔԵՁ արդեն քանի օր, այստեղից եմ տեսնում երկրաշարժից փրկված ընտանիքը այն ամերիկյան հեռավոր երկրում:

Ռուզաննա Կիրակոսյանը արձաններով Մուշից է, ծննդով՝ Ջավախքից՝ սիրահարված իր հող ու ջրին: Երկրաշարժից ամիսներ առաջ տեղափոխվեցին Գյումրի... Շուտով նոր բնակարան մտան՝ չհմանալով, որ հինգ օր անց բնական աղետի սարսափելի ավերածություններից են բախվելու...

Հագիվ փրկվեցին: Որդին չորս տարեկան էր:

Երկու տասնյակ տարի փոքրիկ տնակի մեջ էին՝ իր ծանր հետևանքներով, մինչև մի նոր կյանք, ու իր տքնաջան աշխատանքի շնորհիվ՝ մանկավարժական մեծ ձեռքբերումների հասավ:

Հիշում եմ, թե սարսափելի երկրաշարժից ավերված բնակավայրերն ինչպես էին տնքում ահռելի ողբերգությունից, աշխարհը սգում էր, մենք մտածում էինք, թե Արցախը որքան ընտանիք, քանի որբացած երեխայի կարող է պահել-փայտալի իր ջերմ գրկում:

Գյումրին երբևէ չէի տեսել, բայց այս քաղաքը մտավ սիրտս, երբ «ողբի ու որբի» հայրենիքի այդ հատ-

վածն էլ նորից շունչ առավ բնության ահռելի տարերքից հետո:

Գյումրիում էի, ինձ մտերիմ, հարազատ ու սիրելի Ռուզաննա Կիրակոսյանի հյուրընկալ օջախում: Մեծատառով մարդ, արդարամիտ, անկողմնակալ, խելացի մանկավարժ, իր մասնագիտության լավագույն գիտակ, որին ժամերով կարելի է լսել ու չհագեցնալ:

Նա էքսկուրսիայի հրաշալի սեփական «տուր» էր նախատեսել՝ միասին անցկացնել Գյումրիում, չնայած ուրիշ առաջարկ էլ կար,



բայց նախընտրեցի մշակութային Գյումրին՝ խորապես շնորհակալ լինելով ինձ հարազատ տիկին Կիրակոսյանին և իր որդուն՝ այն մարդկային ազնվագույն որակների համար, որին առերեսվեցի ես:

Արցախի կորստից հետո Երևան՝ արդեն 10 ամիս, հետո Գյումրի՝ մի քանի օրով... Հիասքանչ օրեր են ավելանում Հայաստանի և Արցախի վաստակաշատ մանկավարժներիս հիշողության անմոռաց մատյանում:

2

Այցելեցինք հայոց մեծ բանաստեղծ Հովհ. Շիրազի ՀՈՒՄՐԱՆԻ-ԹԱՆԳԱՐԱՆ: Ընդարձակ բակում մեզ դիմավորեց բերքառատ բալենին... Թանգարանի արտաքին տեսքը գերող էր՝ առանձնակի շքեղությամբ...

Էքսկուրսավար Նարինե Խաչատրյանի հետ էինք, որը Շիրազի քրոջ՝ Գոհարիկի թոռնուհին է: Նա հիացրեց մեզ հայոց դասականի կյանքի, գործունեության, թողած ժառանգության մասին յուրահատուկ մատուցմամբ:

Գրագետ խոսքի հնչողությունը, առոգանությունը, ոգին, ծայրը բացառիկ էին, հարուստ նրբերանգներով, զուներդ ոճով, մի տեսակ շիրազյանական, որին շարունակաբար կարելի էր ունկնդրել:

Իմացանք, որ Շիրազին տունը նվիրել են 1983թ.-ին, սակայն բանաստեղծն այդ տանը չի ապրել, մեկ տարի անց նա մահացել է: Այն գործել սկսել է 2003-ից: Շենքը եղել է մեծահարուստ վաճառականի տուն, որը դարձել է հուշատուն-թանգարան: Այդտեղ Շիրազի անձնական իրերն են, ստեղծագործական տարբեր աշխատանքներ, ձե-

ռագրեր, նկարներ... Կից սենյակում Արա Շիրազի քանդակներն են:

Թեև Շիրազը չի հասցրել ապրել իր անվան տուն-թանգարանում, սակայն ամեն ինչ այնտեղ լցված է իր պոեզիայով, հայրենասիրությամբ, բարձր ոգով ու երկրի նկատմամբ մեծ սիրով: Կանաչը նրա սիրելի գույնն էր, որը խորհրդանշում է բնության զարթոնքն ու կյանքի սկիզբը:

Նրա սեղանին միշտ դրված են եղել Լեոյի «Հայոց պատմությունը» և Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը: Ամեն էջում փակցրել է երեխաների նկարները, որպեսզի «Նարեկ»-ի գործությունը նրանց պահպան լինի ու հեռու պահի հիվանդություններից և փորձանքներից:

Նրա համար Նարեկացին ու Աստված հավասար էին, տարբերությունը միայն այն էր, որ Աստծուն զլխից վերև են պահում, իսկ «Նարեկ»-ը՝ բարձի տակ: Շիրազի համար մայրը համաստվածություն էր, թանգարանում մոր նկարը՝ տեսանելի: Օտար լեզվով խոսելը նա սպիտակ ջարդ էր համարում:

Սենյակի պատին փակցված կարպետը 1902 թվականի ձեռքի աշխատանք էր ու կոչվում է «Մայր Հայաստան», որի վրա նշված են հայերից խլված գավառները, իսկ կինը խորհրդանշում է հայրենիքը:

Ազատ ժամանակ ամեն երեկո հեքիաթի փոխարեն հայրը երեխաների համար հայոց պատմություն է կարդացել:

Սենյակի մի հատվածում ընտանեկան լուսանկարներն են, պատկերված է առաջին կինը՝ Սիլվա Կապուտիկյանը, նրանց նկարիչ և քանդակագործ որդին:

Թանգարանում «Ղարաբաղի ողբի» արձագանքն էր մեզ հասանելի, երբ Արցախի գլխին կախված վտանգի մասին վաղուց էր բարձրաձայնել բանաստեղծը:

Դու չես ջոկվել, խլել են քեզ, Որ մոռանա երգերն հայոց, Ձորերիդ պես խտացել են Քո կարոտով վերքերն հայոց, Ա՛խ, երբ պիտի լեռներիդ պես Վեր բռնցկվեն ձեռքերն հայոց, Որ չդառնա հայոց արծիվն Օտար ծովին ճայ, Ղարաբաղ:

3

Նույն օրն այցելեցինք Ավ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ, որը գործում է 1975 թ.-ից մեծ գրողի հայ-



րական տանը: Այն կառուցվել էր 1828թ.-ին՝ բանաստեղծի պապի՝ Նիկողայոս Իսահակյանի կողմից:

Օրեր առաջ առիթ էի ունեցել Երևանում Հովհ. Թումանյանի թանգարանի կողմից կազմակերպված միջոցառմանը տեսնել Իսահակյանի թոռանը՝ գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի գրողների միության անդամ, արվեստի վաստակավոր գործիչ Ավիկ Իսահակյանին, և ահա նրա պապի՝ Ավ. Իսահակյանի հայրական տանն էինք... Գրողի ծննդյան 100-ամյակի օրերին էր Իսահակյանների տունը դարձել հուշատուն-թանգարան:

Գիտեի, որ այն ենթարկվել է բազմաթիվ ավերածությունների 1988թ. ավերիչ երկրաշարժի հետևանքով: Հետագայում վերականգնվել են բանաստեղծի աշխատասենյակը, Իսահակյանների հյուրասենյակը, ննջասենյակը, խոհանոցը, մառանը, թոնրատունը:

Պահպանված են Իսահակյանի անձնական հարուստ գրադարանը, հնօրյա գրասեղանը, որտեղ ծնվել է նրա առաջին ստեղծագործությունը, դաշնամուրը, հայելին, փայտե մանկական օրորոցը, մահճակալը, բարձերը, ասեղնագործված սեղանի սփռոցը, խոհանոցային բազմաթիվ իրեր, անգամ սուրճի պատրաստման ամանը:

Ուշադրության արժանացավ արցախյան մեղվագործը, որ կախված էր պատից: Ի ցույց էին դրված նաև թոնրատան բազմաթիվ իրեր, և այդ ամենը գրագետ խոսքով ջանասիրաբար ներկայացրեց էքսկուրսավարը:

Կարծում էի՝ անհնար էր լինել Իսահակյանի թանգարանում ու չհիշել գրողի Արցախ այցելելու մասին, որի շուրջ խոսք չկար: Եվ այն էլ այնպիսի ժամանակաշրջանում, երբ վտանգավոր էր նրա այցելությունը հորհրդային Ադրբեջանի մաս կազմող Լեռնային Ղարաբաղ:

Նա եղել է Ստեփանակերտում, Բերդաշեն գյուղում, Ամարասում... Ամենուր Վարպետին ընդունել են շատ ջերմ, խորին ակնածանքով: Գրողի կինը՝ Սոֆյա Իսահակյանը, Շուշիից էր: Պատմում են, որ այնտեղ քաղաքի մեռած պատկերները Վարպետին ցնցել են և այդ տեսարաններից ծնված՝ նա միայն ասել է. «Փախչեմք, այստեղ կոտորած է...»:

Իսահակյանը հագիվ է փրկվել ձերբակալությունից, բայց նրա Արցախ այցելությունից հետո խորհրդային երկրում ադրբեջանական իշխանություններն իրենց իսկական դեմքը ցույց տվին պաշտոնագրությամբ, ձերբակալություններով...

Ավ. Իսահակյանն էլ դեռ այն օրերին զգաց, որ ժամանակի ընթացքում Ղարաբաղում հայ չի

մնա: Նա կանխագագ, և ցավոք, այն իրականություն դարձավ անցած տարի արցախցիներին բռնատեղահանությամբ, Արցախի կորստով...

Եվ այդ դեպքերից տարիներ անց Իսահակյանի թոռ Ավիկ Իսահակյանն այցելեց Արցախ, եղավ Ստեփանակերտում, անգամ այն հյուրանոցում, որտեղ Իսահակյանը կնոջ հետ իջևանել էր: Նա այցելեց Բերդաշեն գյուղը, գյուղացիներ կային, որ հիշում էին Իսահակյանի 1948թ.-ի այցելության մասին:

Հետագայում Ավիկ Իսահակյանի՝ Արցախ այցելելուց հետո ծնվում է 40-րոպեանոց «Արցախ. Իսահակյանի հետքերով» ֆիլմը, նաև՝ «Արցախը և վարպետը» գիրքը:

4

Կինոյի և թատրոնի նշանավոր դերասան ՄՀԵՐ (ՖՐՈՒՆԶԻԿ) ՄԿՐՏՉՅԱՆԻ ՀՈՒՄՐԱՆԻ-ԹԱՆԳԱՐԱՆ մտանք:

Մարդ, որն ուզում էր ժպտով մարդկանց լուրջ բաներ ասել: Եվ ասաց ու թողեց հավերժությանը, ամեն մի խոսքը՝ մի-մի դաս, որ ուղեցույց է դարձել մեր անցնելիք ճանապարհին:

Հենց այդպես ժպտալով էլ նրան «հանդիպեցինք» թանգարանի մուտքում: Կանգնեցի կողքին՝ հավերժանալու պահի զգացողությամբ՝ հիշելով նրա տողերը.

«Գիտեմ, որ մարդիկ ինձ սիրում են: Բայց դա նրանից է, որ ես էլ



իրենց եմ շատ սիրում, բոլորին՝ մեկ առ մեկ: Լիաթք ծիծաղ են ցանկանում ձեզ, լուսավոր ժպիտ և մեծ նվիրվածություն՝ դեպի թատրոնը, կինոն, դեպի արվեստը: Հայրենիքի զգացողությունը պահեք ձեր մեջ, ինչպես սերն են պահում ձեր սրտում, հոգով ու սրտով կապված մնացեք հող ու ջրին, հոգևոր հարստությանը, ծննդավայրին»:

Գյումրիում հիշեցինք նաև «ՄԵՐ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՏԱՆԳՈՆ»: Մի հատված՝ «Վառեն, մարեն...», որ տրամադրություն ստեղծեց, առիթ տվեց նկարվելու, հիշելու սիրված դերասաններ Միեր Սկրտչյանին և Գայյա Նովենցին:

Այլ աղբյուրներից տեղեկացա, որ անցյալ դարի վերջում Գյումրիում նկարահանված կինոֆիլմերը քաղաքը դարձրին կինոպատմություն կերտող միջավայր: Ֆիլմերում նկարահանված շեքներն ու շինությունները գտնվում են Գյումրու պատմական

ՊՏՈՒՅՏ ՍԸ...

կենտրոնում և հանդիսանում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ: «Մեր մանկության տանգոն» ֆիլմը նկարահանվել է 1984թ. «Հայֆիլմ» կինոստուդիայի կողմից: Ասում են՝ ֆիլմը նկարահանելուց հետո այդ պատշգամբին գյուներեցիները այլ անուն ու հասցե տվեցին՝ «Վառեն-մարենի բալկոնը»:

5

ԵՐԱՆՈՒՅԻ ԵՎ ՄԱՐԻԱՍ ՔՈՒՅՐԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՂՈՒՄ ԷՒՆԵՐ: Մի քանի հարյուր նկարներում Արցախ էի փնտրում... Ջգացի, որ տաղանդավոր նկարչուհիների բազմաթիվ գործերը պետք է գնահատել, բայց ինքս, մասնագետ չլինելով, հայացքս Արցախ էր փնտրում: Եվ հանկարծ հենվից տեսա այդ նկարը՝ տառիկների պատկերով: Մեր մեծ ազի-

եկեղեցին վերանորոգվում է նաև այս օրերին՝ Վարդան Ղուկասյան անհատի հովանավորչությամբ:

Ջանգակատան գմբեթը, որն ընկել էր երկրաշարժի ժամանակ, գտնվում էր եկեղեցու կողքին՝ որպես Սպիտակի երկրաշարժի հիշատակ: Եկեղեցու կողքին տեսանելի էր նաև երկրաշարժի զոհերին նվիրված «Անմեղ զոհերին, բարեգութ սրտերին» հուշարձանը: Այն Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու բակում է, որը մի տեսակ անսովոր սարսուռ ու ակնածանք է ծնունդի սրտում:

7

«ՅՈՑ ՎԵՐՔ» ԵԿԵՂԵՑՈՒՄ ԵՆՐ: Օր առաջ մեր ֆեյսբուքյան «ընդհանուր ընկեր» Վարիմե Գրիգորյանի առաջարկը, որ ցանկանում է միանալ մեզ ու տեսնել Նատաշա Պողոսյանին, իրական դարձավ: Մենք մի ասիսի էինք՝ երեքով, ջերմ միջավայրում և մի նոր առաջարկով՝ Ռուզաննա Կիրակոսյանի կողմից,



պատմության, և՛ ամենօրյա կյանքի հետ, ինչպես նաև տեղական մշակույթի և քաղաքի ճարտարապետական առանձնահատկությունների հետ: Հայտնի տունը կառուցվել է հարուստ առևտրական Պետրոս Չիթոբյանի կողմից 1872 թ.-ին: Չորս եղբայրները Արևմտյան Հայաստանի Չիթոբյան գյուղից էին գաղթել Ալեքսանդրապոլ:

Թանգարանի ցուցասրահներում տեսանք գյուներեցի արհեստավորի և ունևոր խավի բնակարանների տեսքը: Մի սենյակում շքեղ կահույք է, մյուսում՝ հասարակ սեղան ու աթոռ, մի պահարան՝ հին սպասքով: Սենյակներից մեկում Գյուներվա ֆայտոնն է, մյուսում՝ լուսամուտի մոտ կանգնած աղջիկը, որը մինչ օրս դուրս է նայում՝ սպասելով սիրած տղային:

10

ԳՅՈՒՄՐԻ ԿՎՐԴԱՆ ԱՃԵՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԻՄԱՍԻՎԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԴԻՄԱՅԻ ԶՐՈՍԱՅԳՈՒՄ ԷՒՆԵՐ՝ մեր մեծերի՝ Հովհ. Շիրազի, Ավ. Իսահակյանի, Միք. Մկրտչյանի քարե քանդակների կողքին: Անձրևը չխանգարեց՝ «Նրանց հետ» նկարվելու մեր մեծ ցանկությանը: Ամեն ինչ գերող էր, մաքուր, երբ վերկից տեղացող անձրևը ասեղնագործում էր մեր շուրջը՝ հավաքելով վերջին փոշին ծառերից, ծաղիկներից, խոտերից պուրակի նստարաններից, քանդակներից...

Հիշեցի, որ օրեր առաջ Ջորավար Անդրանիկի հրապարակում, ծիու վրա նստած, նրա հուշարձանը նկարեցի, հետո մտանք Ֆիդայիների պուրակը: Եվ որքան շատ քանդակներ կային մեր աջ ու ձախ կողմերում, որոնք անուն են թողել իրենց հետևում, մի-մի կենսագրություն, որ ազգի, հայրենիքի նկրտության օրհնակ էր...

Մենք նկարվեցինք Սոսե մայրիկի քանդակի կողքին: Անմխիթար էր շուրջը... Հասկացա, որ ոչ մի անձրև չի կարող մաքրել փոշու հետքերը, քանի դեռ մոլխտեղ գրկել են թեղեղյանի, Դրոյի, Սոսեի ու մի քանի տասնյակ ազգի հերոսների քանդակները:

Պատմության ուսուցչուհի Ռուզաննա Կիրակոսյանի խոսքն ինձ սթափեցրեց. «Աշակերտներիս հետ եկել էինք Ֆիդայիների պուրակ, բաց երկնքի տակ նրանց հետ դաս վարել...»:

Ապրում են նրանք, քանի դեռ նրանց հիշողներ կան, որքան էլ փոշի նստի այդ քարե արձաններին: Միայն մարդկային ազնիվ որակներով օժտված մանկավարժը կարող

էր վերակենդանացնել անուններ՝ սերնդին փոխանցելով այնպիսի հերոսական ճանապարհ, որն ազգի լինելության համար էր:

11

Իմ այցելությունը Գյուների ավարտվեց՝ հետևում թողնելով կյանքիս էջերին ավելացած մի նոր շրջան, որ պիտի ունենա նոր վերնագիր՝ «Գյուների շարքից», շնորհիվ Հայաստանի վաստակավոր մանկավարժ Ռուզաննա Կիրակոսյանի, որի հրավերով վայելեցի մեկշաբաթյա հանգիստ մշակութային Գյուների քաղաքի իր հյուրընկալ օջախում:

Գյուներում եղած ամեն օրը դաջվեց մեր սրտերում՝ մոտիկից ավելի շատ ճանաչելով միմյանց, համակրանքի, սիրո ու հարգանքի նոր թեժությամբ: Մենք այնտեղ էինք, որտեղ մեզ չէին սպասում գուցե, բայց որտեղ էլ այցելում էինք, հետք էինք թողնում պատկառանքի, որ հարստացել ենք հոգով՝ մանկավարժներիս մշակութային իմացությանը նորն ավելացնելով:

Այս օրերին մեզ հետ էր Ջավախքը՝ տիկին Կիրակոսյանի հայրենի ծննդավայրը, մեզ հետ էր Արցախը, որի հեռավոր հառաչանքը լսելի էր մեզ ամեն օր:

Մշակութային թե հոգևոր օջախներ (տուն-թանգարան, եկեղեցի,



ին հիշեցի: Նա էլ նման տարագ էր հագնում:

Էքսկուրսավարի ծայրը մեզ հասավ, երբ մի խմբի բացատրում էր նկարների պատմությունը:

«Այս նկարում արցախյան տարագն է...», -լսելի եղավ ինձ:

Յետ շրջվեցի, թվաց՝ կորած Արցախս գտա, ու նորից հարցրի՝ արցախյա՞ն...

Գյուներում պատկերասրահը գործում է 1987թ.-ից: Քաղաքին իրենց աշխատանքները նվիրաբերելու առիթով ընդգրկված է Գյուների պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում:

Մի օր էլ շքեղացավ, երբ սիրելի մարդկանց՝ Ռուզաննա Կիրակոսյանի և Կարինե Գրիգորյանի հետ այցելել էինք պատկերասրահ:

6

Այդ օրը Գյուներին մարդաշատ էր: Անձրևախառը եղանակը զովություն է տարածում մեր շուրջը: Քաղաքի մի գողտրիկ անկյունում նստած էինք: Ես՝ Արցախից, Ռուզաննա Կիրակոսյանը՝ ծննդով Ջավախքից, Կարինե Գրիգորյանը՝ Շիրակից (Գյուների):

Մանկավարժի ճանապարհ անցած, կյանքի թոհուրոհ հաղթահարած, հայտնված մշակութային մի քաղաքում, երբ հանդիպման վայր էր ընտրվել՝ երեքով մի քիչ գրուցելու, միմյանց հետ վայելելու մի քանի հիասքանչ ժամեր...

Այցելեցինք Գյուների ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ: Պատարագ էր: Պարզվեց՝ եկեղեցին կառուցվել էր 1853 թ.-ին, Անիի մայր տաճարի նմանությամբ: Ըստ որոշ աղբյուրների՝ շինարարական աշխատանքներն այն ժամանակ ավարտվել էին 1873 թ.-ին:

Նման զուգադիպություն էր, որ

որ լսելի եղավ եկեղեցի մտնելիս: Որքան «Յոթ վերքը» ցավոտ հնչեց, նույնքան՝ հոգուս հարազատ, որ այս եկեղեցուն մոտեր ենք վառելու Արցախ վերադարձի, հայոց երկրի համար...

Որոշ աղբյուրների համաձայն՝ այն կառուցվել է 1874-1886 թթ.-ին, բայց ինչու՞ «Յոթ վերք», երբ եկեղեցու անունը Սուրբ Աստվածածին է...

Շուտով իմացա, որ պատճառը եկեղեցու խորանում պահպանվող նկարն է՝ սրբապատկերը, որը խորհրդանշում է Աստվածամոր յոթ վերքերը: Դրանք խաչված Քրիստոսի շուրթերից թռած յոթ բառերն են, որ մխրձվել են Մարիամի սիրտը՝ յոթ սուր վերքեր պատճառելով նրան:

Ու տեղեկանում ենք, որ նախկինում եկեղեցու դիմաց բնակելի շենք կար, որը փլվել էր երկրաշարժի պատճառով: Կիսավեր շենքն ամբողջությամբ վերացվել է, դրա արդյունքում եկեղեցին տեսանելի է դարձել հրապարակից, և Գյուներու երկու եկեղեցիները՝ «Յոթ վերք» ու Սուրբ Ամենափրկիչը, նայում են միմյանց:

Սիրտս լցված էր գոհությամբ, երախտապարտ լինելու ցանկությամբ երկու սիրելի անձանց, երբ նրանց շնորհիվ անցած ամիսների դառնության հետքերը մոռացած՝ շարունակում էի վայելել անմոռաց օր...Եվ որքան գեղեցիկ էր կյանքը...


8

Այցելեցինք ԶԻԹՈՂՅԱՆ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ:

Ասում են՝ Գյուներում չես եղել, եթե չես մտել այդ թանգարանը:

Իմացանք, որ գյուներեցի հարուստ վաճառականի տունը վաղուց դարձել է ամենագրավիչ և ամենաշատ այցելվող թանգարանը Գյուներում: Այն հին առանձնատուն է՝ տների հավաքածու, որը կապ ունի և՛ Գյուների

9 Բարձրությունը հաղթահարեցինք դեպի ՍԵՎ ԲԵՐԴ և «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»



ՏԱՆ» ՀՈՒՇԱՐԶԱՆԸ, որոնք միմյանց կից էին՝ Գյուների հարավարևմտյան մասում:

Պարզվում է՝ հուշարձանը տեղադրվել է 1975 թ.-ին, այն ընդգրկված է Գյուների պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում:

Բարձունքում ենք: Մեր տեսադաշտում ամբողջ Գյուներին է... Մտովի տեղափոխվում են Գանձասար: Մաքուր օդ, հրաշալի բնություն... Պատմության մասնագետ ՀՀ վաստակավոր մանկավարժ Ռուզաննա Կիրակոսյանն էլ տարիներ առաջ

ԱՎԵՆԱՅՏԸ ԱՆՆԱՎԱՏԱԼԻ

ԱՅՍ ԵՐԿԻՐԸ ՊԱՆԵԼ Ե ՊԵՏՔ, ՈՐ «ԱՐՃԱԽԸ» ԶԿՐԿԵՎԻ

Ծանր իրավիճակ էր շրջափակված Արցախում, բայց մենք աշխատանքի էինք գնում, մեր երեխաները՝ դպրոց, մանկապարտեզ, երբ չգիտեինք ո՞րն էր գեղի կեղտոտ քայլերը:

Երբեմն ինքս ինձ հարցնում էի՝ որտեղի՞ց ենք մեծով թե փոքրով ու՞՞ ստանում, որ դիմանում ենք այդ ամենին, ու երբ հետադարձ հայացք էի ձգում հայ ժողովրդի անցյալին, հասկանում էի, որ դարերն են մեզ պատգամել, որ ամուր կառչենք հողից, որը մեզ սնել, պահպանել է, ու կառչած էինք՝ հավատալով, որ կյանքի իմաստը սեփական հողում ապրելն է, հողի համար պայքարելն է, մեր արմատները պաշտպանելն է, մեր գերնպատակը հողը սիրելն է, որը կոչվում է Հայրենիք:

Ցավոք, տառապած էր այդ մի կտոր հայրենիքը՝ հոգնած չարիքներից, աշխարհի դավերից... Երանի՜ միայն արտաքին թշնամի ունենայինք, գոնե կիմանայինք, թե որ ուղղությամբ պետք է դիմադրել:

1

Այս երկիրը պահել է պետք, հիմնավորը հայոց երկիրը, այն մեր նախնիներն են իրենց կյանքի գնով պահել-պաշտպանել, որ մեզ հետ սերնդեսերունդ դարերով տանենք:

Մենք ի՞նչ ենք թողնում սերունդներին՝ կորսված Արցախ, թշնամու «յաթաղանի» տակ կուչ եկած մայր երկիր, որտեղ բաժան-բաժան են անում հայրենի հողը, հայկական գյուղերը, բարձունքները, ճանապարհները, որոնք շուտով թշնամու համար մի-մի «Հակարիի կամուրջ» են դառնալու, որ հսկեն հայոց աշխարհի ելունուտը:

Ամեն օր ինձ երևում է այն անցակետում կանգնած ազերիների ոհմակը՝ մեկը մյուսից նողկալի, գիշատչի հայացքով...

Մեքենայի պատուհանները իջեցնել տվին, մեկը գլուխը խոթեց ներս՝ տեսնելու քանի կին, քանի երեխա կա: Մեր աչքից չփրկեց մյուսի վավաշոտ ու զագրելի հայացքը՝ կանանց ուղղված:

Սիրտս անհանգիստ թարտաց, ցանկացան մեր «բեռները» ստուգել...

«Գիրքս»՝ «Պատերազմական օրագիրը», անցավ մտքովս, հանկարծ չտեսնեմ:

Այն միջոցին էի 44-օրյայում հավերժացած տղաներին՝ գրքի կազմը ձևավորած մեր դպրոցի գոհված շրջանավարտների նկարներով:

...Ազատ շունչ քաշեցինք: Չտեսան: Փրկված էինք մենք, փրկված էր գիրքը, որի տողերը շարվել էին մահ սփռող անօդաչուների հրետակոծության տակ:

Ի՞նչ անել, երբ Հայաստան երկիրն էլ մաս-մաս կորցնում ենք, և այդ ճանապարհին ինչ-պիսի՞ միջոցներ են օգտագործվում, ինչպիսի՞ դրդապատճառներ են երևան հանվում, որոնցով շեղում են ժողովրդի ուշադրությունը:

Հանրապետության հրապարակը, որ ամիսներ առաջ հավաքատեղի էր դարձել՝ իշխանափոխության պահանջով, Վարդավառի օրը դարձել էր ցնձազին տոնակատարության կենտրոն: «Ձրոցի», որ մոռացության էր տվել երկրի հոգսերը, գյուղերի հանձնումը, «հարևան» բռնապետի բարբառանքները՝ պատերազմի սպառնալիքով, սահմանադրության փոփոխության պահանջներով...

Աչքիս մեկընդմեջ երևում են այն թափով տղամարդիկ, որ ջրով լցրած դուլները ձեռքներին՝ ջրոցի էին խաղում մեծ ոգևորությամբ:

Ի՞նչ էր պետք երկիր հանձնողներին, երկի «մի բուռ» ջուր, որ «մաքրվեին» մարդիկ

հիշողության կորստով՝ մոռանալով հայրենիքին սպառնացող վտանգը:

Համազգային շարժման օրերին մարդկանց ուշադրությունը բեկելու շարժառիթ դարձավ հեծանիվը, որն իր շուրջը համախմբեց մարդկանց և այն էլ՝ մի քանի անգամ: Ու հեծանվամրցավազը դարձավ շարունակական, չէ՞ որ կյանք էր հեծանիվը այն տունուտեղ կորցնող տավուշցիների արցունքների կողքին:

Երեխաներին պաղպաղակով հյուրասիրելը նորաձև էր գուցե, որ կիրառվեց, բայց հաջողված էր, երբ պաղպաղակը մոլոր ուժ դարձավ երեխաների և երկրի իշխանավորի շփման ժամանակ, երբ վերջինս գյուղեր էր այցելում:

Չգարմանանք, որ իրերը՝ ջուր, հեծանիվ, պաղպաղակ..., «մոտիվացիայի» աղբյուր են դառնում նպատակային երկիրը կորստյան մատնելու «ֆոնին»:

Եթե ավելացնենք այն «պետականամետ» գործողությունը՝ հայ գործարարներից գանձվող միլիոնները, ուրեմն փողն էլ իր դերն է խաղում՝ մեր շուրջը տեղի ունեցող ոչ հայանպաստ իրադարձություններից շեղվելու համար:

Մնում է ասել՝ մեզ երկիր՞ է պետք, թե՞ արդեն հոգնել ենք Հայաստան ունենալուց, իսկ մենք՝ հազարավոր արցախցիներս, խեղդվում ենք Արցախի կարոտից, որ մնաց շան բերանում:

Հիմա ինչպե՞ս է ապրում հայրենագուրկը: Նա իր տեղը չի գտնում, հյուծում է միտքը ամեն օր, ամեն ժամ, ամեն րոպե, թե ինչու կորցրեց հայրենի երկիրը...

Արցախի կյանքից շրջափակման օրերը երբևէ չեն մոռացվում, և ո՞վ կիմանար, որ կզան շատ ավելի ծանր ժամանակներ, ու երանի կտայինք անցած օրերին:

Հացի սակավություն կար շուրջս արդեն քանի օր: Չէի ուզում հավատալ, որ երբևէ հացի պակաս կզգանք, երբ Արցախը հացի երկիր էր:

Այդ օրը հացի մոտակա փուռում ասացին, որ շուտով տեղական ալյուր կստանան: Մտախանութ, մեկուն չկար, մյուսում պարզվեց՝ իմ գնալուց 10 րոպե առաջ վերջացել էր, ասացին՝ 45 հաց 5 րոպեում «թոցրել են»:

Չէի հավատում, ո՛չ, «աշխարհի վերջը» չէ, չնայած նախորդ օրերին էլ հացի պակաս կար: «Կարծում եմ՝ խուճապի մատնվելու կարիք չկա... Հաց չկա, մակարոններն էլ կատարաստ են», - մտածեցի ես:

Կողքից մեկը հուշեց, թե լավաշ կարելի է գնել: Պարզվեց՝ լավաշ էլ չկար... Լավ է, որ խմորեղենից քաղցրավենիք կար, ուրեմն այսօր հացին փոխարինող ուտելիք ունենք:

Եվ հետո որքա՞ն քաղց զգացին մեր երեխաները այդ քաղցրեղենի համար, որ ջրի մնալ ցամաքեց, իսկ շաքարավազ ձեռք բերելը լավագույն երազանք դարձավ:

Նախորդ օրն էլ չէի կարողացել հաց գնել: Խանութից կտրտած ու չորացրած հաց էի գնել՝ հիշելով, որ տատս «կունչուլ» էր պատրաստում՝ չորացած հացը մեջը բրդելով:

Հետո հացի փշրանքը սուրբ մշխար դարձավ, երբ գիշերն ու ցերեկը իրար խառնվեցին, ու մենք, քնից, հանգստությունից զրկված, հացի հեթեթում էինք, ընտանիքին տրվող այն մեկ հացի, որի համար կանգնում էինք ժամերով թե օրերով:

Ասում են՝ շան քիթը մսի հոտ չպիտի ազգեն: Բայց զգեցին, այն էլ՝ ի՞նչ միս... Ու լափեցին ոսկորն էլ հետը... Բայց հերթով այսպես որոնե՞լ ենք հասնելու... Արցախից հե-

տո արդեն որքան ժամանակ հոտոտում են՝ նոր պատահ ձեռք բերելու... Ու ձեռք են բերում հայոց երկրից կտոր-կտոր:

Հետո գլխներին վայ տվողներ կլինեն, որ իրենք էլ երկիր կորցրին, ու ծափ զարկողներ կլինեն, որոնց համար այն լայնարձակ դաշտերն ու խրոխտ լեռները հայրենիք չեն համարվի: Վա՛յ նրանց, որ դեռ կշարունակեն միմյանց մեղադրել երկիր հանձնելու մեջ... Բայց հազա՛ր փառք կտանք նրանց, ովքեր կորցրածը ետ կբերեն:

2.

Այստեղ ամեն օր ենք կորցնում ու շատ ավելի արագ, քան Արցախում էր:

Սերնդին արմատներից կտրելու միջոց է դառնում «Հայոց պատմության» դասագիրքը կառավարության որոշմամբ վերափոխելը «Հայաստանի պատմության»:

Սա նույնն է, որ իրական Հայաստանը «պետություն» որակավորումով անջատվում է դարերով անցած պատմական Հայաստանից, որը պետականություն չուներ: Դեռ հարց է, թե այդ գրքերն ինչ ընդունելության կարժանանան՝ հեղինակներով հանդերձ:

Հայոց (հայերի) պատմությունը համայն հայության պատմությունն է, երբ դարեր շարունակ աշխարհով սփռված հայերի երկիրն է եղել Հայաստանը: Թերևս հիմք է դրվում այն գաղափարին, որ այսօրվա Հայաստանը զատվում է դարերի պատմությունից:

Արցախից անջատումը տարավ արցախցիներին հայրենիքի կորստյանը, հիմա էլ «հայոց»-ից հրաժարվելը տանում է Հայաստանը Սփյուռքից անջատելուն:

Առանց հիմք տուն չի լինում, ու ցավալիք է արձանագրվում՝ Հայաստանը ձեռնոց է դարձել թշնամու նկրտումների համար, հերիք չէ, որ մաս-մաս տանում են, դեռ Հայաստանն էլ ներսից առանց հիմք են թողնում, առանց արմատների:

Եռամիասնության, համերաշխության սյուները փլվում են, հնօրյա է դառնում Սփյուռք-Արցախ-Հայաստան շղթան, տարանջատվում է Հայաստանը: Արցախը չկա, նոր իրական Հայաստանին Սփյուռք պետք չէ:

Ինչպե՞ս կարելի է երկիրը կտրել արմատներից: Անգամ բացառիկ գրադարան, որն ունի շուրջ 22 մլն գրականությանը պահոց, ՀՀ կառավարությունը լուծարում է: Գիտատեխնիկական գրադարանի աշխատակիցները կդառնան գործազուրկ: Կառավարությունը որոշել է նաև օտարել գրադարանի շենքը: Ըստ մամուլի որոշ աղբյուրների՝ «ՀՀ-ում գործող չորս մասնաճյուղերից՝ Գյումրիում, Վանաձորում, Ղափանում և Հրազդանում դիտարկվում է միայն Գյումրու մասնաճյուղի պահպանության հարցը»:

Հայաստանի իշխանության նախընտրությունը ո՞րն է՝ մենա՞կ մնալ, թե՞ Ադրբեջանի և Թուրքիայի նման «դաշնակիցներ» գտնել: Երբ ինչ կատարվում է, նրանց պահանջով է, ուրեմն հայտնագործություն չէ, որ այս իշխանությունները Արցախը փոխանակեցին Ադրբեջանով, Սփյուռքն էլ կփոխարինեն Թուրքիայով, երբ այդ փոփոխությունների մեկնարկը վաղուց է տրված «հարևան» երկրների բռնակալ տերերի կողմից:

Մերտած դաս է դարձել Արցախում ապրած մեր ամեն օրը, ու չէինք ցանկանա Արցախի աղետները կրկնվեն Հայաստանում: Մեր կյանքից դրվագներ կան, որ չենք մոռանում, անգամ երեխաներն էին մեզ զարմացնում, երբ համբերատար հաղթահարում

էին շրջափակման դժվարությունները:

Լույսերը հանգած էին: Տանը երեխա կար, նա արձագանքեց իմ հարցին, թե՛ Տեսնես որքան կկարողանանք այսպես ձգել...

Շատ հաստատուն և կտրուկ նա պատասխանեց.

- Կդիմանանք, որքան պետք լինի: Բոպեներ անց լույսությունը խախտեց.

- Լույսերը հանգած են արդեն 30 րոպե, մնաց 90 րոպե, որ նորից լույս ունենանք: 90 րոպեն ի՞նչ է, աչքներս մի քանի անգամ փակեմ-բացեմ, լույսերը կտան:

Նա մեկն էր Արցախի 30 հազար երեխաներից, որոնց իրավունքները խախտված էին, երբ օրվա ընթացքում, խնայելով էներգիան, երեք անգամ երկու ժամով անջատում էին լույսերը:

Մտածեցի՝ ո՛չ մի հուսահատություն, ո՛չ մի տվյալստեղ մեր կողմից չպիտի արտահայտել, քանի դեռ մեր երեխաներն այդքան լավատես են:

- Երանի՜ լույսերը տան, բարին էլ՝ հետը: Առավոտյան մեր աչքերը բացեմք, տեսնենք Արցախը շրջափակումից դուրս եկած, գրաված տարածքները հետ վերադարձած, կյանքն էլ՝ խաղաղ:

Ես լուռ էի, տխուր, ոչ թե պատասխան չունեի, այլ թռեցիկիս խոսքերով հիացած էի, որ այնքա՛ն լուսավոր էին, կյանքով լցված:

Ապրելը դժվարացավ, երբ բախվեցինք խանութների դատարկ դարակներին: Հացի խնդիրը գերակա դարձավ, երբ առերեսվեցինք սովահարության: Չէինք էլ ուզում հավատալ, որ նոր դարում պատժի ձև են ընտրել մեզ սովի մատնելը:

Այդ օրը խանութ մտա: Մանկանը գրկած մայրը շուտափույթ նայեց դատարկ դարակներին՝ բարձրաձայն հարցնելով, թե իր սոված մանկան համար ինչ կարող է գնել: Լռությունը խախտեց վաճառողուհին՝ նրան ցույց տալով քարտերով շնչերին հասնող մակարոնեղենը: Կինը հանկարծակի ընկրկեց, կարծես դժգոհ պիտի ինչ-որ խոսք ասեր, բայց երեխային պինդ գրկած՝ գնեց այն:

Մտքերով այդ բախիկի հետ մնացի, որի մանկական շուրթերին հասու չէր դեռ մայրիկի գնածը:

Մեծ քաղաքի լիքը խանութները մեկընդմեջ ինձ հիշեցնում են մեր դժվար օրերը, երբ սնունդ գտնելու փնտրտուքի մեջ էինք:

Մոտակա գյուղից տուն վերադառնալիս մտա գյուղական խանութը: Գուցե գնելու ինչ-որ բան լիներ: Անշուք էր, դատարկված: Ինձ անծանոթ տղամարդը մտավ, գննող հայացքն ընդգրկեց խանութի դատարկությունը, ապա ձեռքերը մեկնած հարցրեց. «Այս դատարկ ձեռքերով ինչպե՞ս տուն մտնեմ, երեխաներիս աչքերին ինչպե՞ս նայեմ...»:

Օր օրի ծանրանում էր կյանքը, պատեպատ էինք զարկվում ինչ-որ տեղից ինչ-որ բան ձեռք բերելու համար, իսկ այդ ձեռք բերածը առաջին հերթին տան երեխայի համար էր, ամիսներով քաղցրեղենից, մրգերից, բանջարեղենից զրկված երեխաների, երբ հողին պահ տված վարած-ցանածն էլ՝ ջրհեղեղների բաժին էր դարձել արդեն քանի անգամ: Թե ինչու բնությունն էլ դեռ էր մեզ, չհասկացանք,

Գուցե մեր համբերությունն էր չափվում, որ մի օր պիտի սպառվեր մի նոր պատերազմով, բենգինյանկայանի պայթյունով՝ փրկության միակ ճանապարհ ընտրելով բռնի տեղահանվելը...

ԱՐՑԱՆՅԱՆ ՃԱԿԱՏԱԳԵՐ

ՑԱԿԻ ՄԱՍԻՆ ՊԻՏԻ ԽՈՍԵԼ

Մաս երկրորդ

ԱՌԱՆՑ ՁԵՐ ԿԻՍԱՏ ԵՄ



Ցավերը տարբեր են լինում, քանի որ տարբեր են նաև դրանք կրող մարդիկ: Բայց ցավը չունի համեմատության աստիճաններ: Դու կարող ես գոռալ, կարող ես լուռ կուչ գալ, դրանից ցավն ավելի կամ պակաս չի դառնում:

Հայրենիքի հանդեպ իր ցավոտ սիրո պատմությամբ այս անգամ մեզ հետ համաձայնեց կիսավել խնսպատցի Անահիտ ՇԱՐՎԱՍՏԱՆՅԱՆԸ: Մասնագիտությամբ տնտեսագետ է: Աշխատում էր Ասկերանի մշակույթի և երիտասարդության կենտրոնում՝ որպես հաշվապահ:

- Մայրիկն ուժեղ է, թե՛...
- Իսկ ո՞րն է ուժեղ չլինելու այլընտրանքը:

Անահիտի պատասխանը սթափեցնող էր: Իզուր եմ կարկանդակում ցավոտ հարցեր տալիս: Մեզմիջև և ոչ մեկն էլ այլընտրանք չունի ստեղծված իրավիճակում: Պիտի պատրաստ լինենք ինչպես խոսել, այնպես էլ լսել մեզ բաժին հասած արհալիրքի մասին:

«14 տարեկան էր մայրս, երբ տատիկս երկու անգամ փախա դատարանից: Փշաքաղվում էի՝ լսելով տատիս պատմածները, թե ինչպես են իրենք հրաշքով փրկվել՝ նետվելով մեկ րոպե հետո շարժվել պատ-

րասովոր գնացքի մեջ: Հետևում թողնելով մի ողջ կյանք՝ իրենք շարժվում էին դեպի անորոշություն: Իսկ այնտեղ, շատ մոտ ապագայում իրենք սպասում էին երկրաշարժը, ցուրտ ու մութ տարիները, յուրայինների կողմից չհասկացված լինելու դառնությունը, Լոռվա ցրտաշունչ ձմեռները տնակային պայմաններում: Թվում էր՝ խավարը երբեք չի նահանջի: Բայց այն կամաց-կամաց տեղի տվեց: Ավերված Վանաձորն ու բնավեր հավք դարձած գաղթականները, այնուամենայնիվ, ընդհանուր լեզու գտան: Իսկ մորս վիճակված էր արցախցի դառնալ: Ասկերանի շրջանի խնսպատ գյուղը դարձավ այն վայրը, որտեղ նա շուրջ արեւելյան իր բույնը: Երբ ինքն էլ արդեն մայր եմ, հիմա եմ հասկանում, որ մորս արարքը յուրօրինակ սխրանք էր: Նրա ընտրյալը պատերազմում հաշմանդամ դարձած տղամարդ էր, իսկ հետպատերազմյան Արցախն էլ իսկական փորձություն էր քաղաքից եկած աղքատ համար, որի կողքին ոչ մի հարազատ չկար:

2006 թվականին հայրս դարձավ խնսպատի համայնքի ղեկավար: Հոգսերը չթեթևացան, իսկ պատասխանատվությունը մեծացավ: Ցանկացած ղեկավարի թիկունքում պիտի ուժեղ կին լինի: Մայրս պատվով տարավ նաև այդ փորձությունը երկար տարիներ: Բանից անտեղյակ մարդիկ հիմա կասեն. «Ի՞նչ մի դժվար բան է գյուղապետի կին լինելը»: Հավատացե՛ք, ֆիզիկական ու հոգեկան մեծ ռեսուրսներ պահանջող տքնաջան աշխատանք է: Հանուն հայրենի հողի խեղճած ոտքերով աշխատող հայրս ու երկու բռնազաղթ ճաշակած մայրս մեկն էին այն հազարավոր զույգերից, որոնց կյանքը վավերագրելու անհ-

րաժեշտությունը կա: Հատկապես հիմա, երբ թյուր կարծիք է ձևավորվում՝ իբր Արցախում ձեռքներս ծալած վայելում էինք դրսից եկող բարիքները: Իմ ծնողները՝ Կրիստինա և Սամվել Շահրամանյանները, ամուր կառչած էին հողին: Հող, որտեղ 2023թ. սեպտեմբերի 25-ին դժոխային պայթյունը վերջ դրեց նրանց երազանքներին...»:

Անահիտը լռում է: Եղբոր՝ 22-ամյա Արմանի մասին հիշողությունները անտանելի ցավոտ են: Նրա բացակայության հետ հաշտվել չի լի-

ված էին: Երբեք ոչ մի ավելորդ բան չէր սափ կամ անլուրջ քայլեր չէր անի: Դեռ փոքրուց հասուն մարդու պահվածք ուներ: Ոչ միայն ժամանակակից տեխնոլոգիաներն էին նրան հեշտ տրվում, այլև՝ գյուղատնտեսական աշխատանքները: Հորս աջ թևն էր, մորս՝ պարծանքը: Ես ու կրտսեր քույրս էլ գիտեինք, որ ամեն հարցում կարող ենք ապավինել նրան: Առանց նրան մենք անթև ենք: Ես հիմա նույնիսկ հուշերից եմ վախենում: Դրանք դաշույնի պես սիրտս են խրվում: Հենց հիշում եմ



27 10 2018

նում: «Ինչպե՞ս, ինչո՞ւ, ո՞ր մեղքի համար»-անպատասխան հարցեր, որ հանգիստ չեն տալիս սկսած այն պահից, երբ անցած նոյեմբերին ստացան ԴՆԹ-ի պատասխանը: Վանաձորը դարձավ Արմանի վերջին հանգրվանը՝ մեկընդմիջտ կապելով ծնողներին այդ քաղաքի հետ: «Եղբայրս կարող էր հրաշալի մասնագետ դառնալ շատ ու շատ ասպարեզներում: Նրան դասավանդած ուսուցիչները կիսատատեն ասածներս: Ավարտել է ԱրՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը: 2022թ.-ից արդեն աշխատում էր Instiget ընկերությունում: Վերլուծական մոտեցում ուներ ամեն հարցում: Միտքն ու խոսքն էլ կշռադատ-

գյուղը կամ սոցցանցներում եմ նկար տեսնում, թվում է՝ դարպասը կբացեմ ու կտեսնեմ բակում նստած Արմանին: Նա ժպտալով առաջ կգա ու հերթով կգրկի դատրիկներին: Նրանց բոլոր բնահաճույքները կկատարի, երես կտա, բայց հետո բոլոր շամուսնացած քեռիների պես ինձ կմեղադրի, որ ճիշտ չեմ դաստիարակում երեխաներին: Մենք երկար ու բարակ կվիճենք դաստիարակության մասին: Ես վիրավորված կասեմ. «Եսա վեր քեզ խոխա ինի, տու ինձանա լյավ կդաստիարակիս»: Իսկ նա վստահ կասի. «Իմ խոխա դաստիարակված ա ինյան»:

Ձրույցը երկուսիս էլ դժվար է տրվում: Թե ինչպես էր Անահիտը կապված հայրենի գյուղի հետ, հազիվ թե ինձնից լավ որևէ մեկն իմանար: Լոկ ծննդավայր չէր նրա համար խնայատու, այլ գործը մի ուժ, որն անսասան էր պահում իրեն ցանկացած փորձության դեպքում: Այստեղ իր բոլոր սիրելիներն էին ապրում, այստեղ իր մանկության կածաններն էին, իր պատանեկան երազանքները: Լավագույնն էին իր համար խնայատու մանկապարտեզն ու դպրոցը, խնայատու բարեկարգվող փողոցները, սրբավայր Մեծ Նանն ու սառնորակ Կիղատեղը, հարազատ Դուշին թաղն ու ճիւղաբարը, որի գեղատեսիլ ափին էր հենց գտնվում իր հայրական տունը: Ծնորհակալ էր ամուսնուն, որ կիսուն էր իր հայացքները, և երբևէ, նույնիսկ ամենավտանգավոր պահերին գյուղից հեռանալու տարբերակը քննարկման առարկա չէր դառնում:

Նոր իրականությունը ոչ մի աղետ չունի նախկին կյանքի հետ: Իրարից շատ հեռու երեք տարբեր բնակավայրերում եմ ապրում ինքը, քույրն ու ծնողները: Միմյանց զորակցել ստացվում է միայն հեռավար եղանակով: Անորոշ օրերի շրթան անվերջանալիորեն ձգվում ու ձգվում է: Ցավը չի մեղմանում, իսկ «ինչու»- ները շարունակվում են անպատասխան մնալ: Փորձում է հանգիստ արձագանքել նոր ժամոթների «Հարմարվե՛լ եք» հարցին, բայց հոգին նման պահերին ծառ է լինում ցավից:

- Ի՞նչ կփոխեիր անցյալում, եթե հնարավորություն լիներ:

- Կանեի այն, ինչ երբեք չեմ արել. ամուր կգրկեի եղբորս ու հայրենիքս: Բարձրաձայն կասեի, որ ես երկուսին էլ շատ եմ սիրում, որ ես առանց իրենց կիսատ եմ:

Մեղինա ՄԵՇԼՈՒՄՅԱՆ

ԱՅԳԻՆ

Ցե Ծակատագրի հեգնանքով ԴՆԹ անալիզի պատասխանը եկավ նոյեմբերի 19-ին՝ Վահեի միևնույն օրը: 39-ամյա Վահեն իր վերջին հանգրվանը գտավ Եռաբլուրում՝ հոգին թողնելով իր հող ու ջրին, իր այգուն, իր Արցախին, որից հեռացողներից ինքը խիստ նեղանում էր: Լիանան չէր կարող չվերադառնալ Արցախ, որքան էլ նրան փորձում էին համոզել դա չանել՝ անվտանգության նկատառումներից ելնելով: «Վահեն զոհվալա, վեր ուրան խոխեք էդ հողունը կարին ապրին», - դա էր միակ ճշմարտությունն իր համար: Նա նաև հրաժարվեց այգին վաճառել: Նույնիսկ այդ գումարով Հայաստանում տուն գնելու առաջարկը նրան չզայթակեց: Գիտակցում էր՝ առանց ամուսնու դժվար կլինի հսկայական տարածքը խնամել: Բայց Վահեն հոգի էր դրել այդ այգուն. ինքն իրավունք չունեի համուն և ոչ մի զանձի հրաժարվել նրա երազանքներից: 2020-ի մղձավանջից իրական կյանք վերադառնալն անհ-

նարին էր թվում: Միայն թե այլընտրանք չկար. իր ձեռքերում զավակների ապագան էր:

Լիանայի հետ ծանոթացա 2023-ի հոկտեմբերին Ստեփանավանում: Արցախցիներն առանց խոսելու էլ միմյանց հեռվից են ճանաչում. անտունի մոլորված հայացքն է մատ-



նում: Իսկ երբ բախտակիցը, պարզվում է, նաև զաղափարակից է, համարի՞ր՝ բախտը կարգին էլ բերել է: Տնտեսագետ Լիանայի հուզական ներաշխարհում թվերը տեղ չունեին: Հաշվեկատվության իսպառ բացակայությունը, հազվագյուտ սրտացավությունն ու օգնության հասնելու պատրաստակամությունը չէին կարող աննկատ մնալ նրա հետ կարծ ժամանակ շփվելուց հետո: Դժվար էր կռահել, որ իր ցավը նա սպանում է սիրով: Չէի էլ կռահի, եթե չլինեի այգին: Երբ զավթիչների տարածած տեսանյութերում տեսավ հողին հավասարեցված իրենց շենքը, փորձեց անսասան մնալ. չողբալ, որ իրենց հյուսած տաքուկ բույնը էլ չկա: Միայն թե այգուն ձեռք չտան: Առանց այն էլ այգին նեղացած կլինի, որ իրեն չեն ջրում... Միայն թե այգին չչորանա...:

Վահեի մասին Լիանան խոսում է ներկա ժամանակով: Նա այդպես կարծես մարտահրավեր է նետում ժամանակին, որը, հակառակ սփոփողների, իր վերքերը չբուժեց...



ԳՐԱԿԱՆ ԱՐՑԱՆ

ԺԱՆՆԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆՉ

1 *** Փրկված մի պատահիկ ծննդավայր՝ որը, սուրասայր մանկիչների մեջ առնված, մե՛րկ...

Հոշոտված, ծվեն -ծվեն, մոխրացած մի հայրական տուն՝ անհասկանալի, մարդկային բանականությանը չհասնող թանձր կեղծիքում՝ անորոշ, անորոշ, անորոշ...

Անմարսելի կորուստներից սմբած իննամայա հոր անպատասխան հարցերի տակ ճգնված ու գետնամած օրեր՝ օտարված, աննպատակ, անե՛լք...

Խծաբերող, Կատարվանքը, Հին Թաղերը հորս հորովելը՝ որպես

անփոխարինելի մասունք, իրենց հուշերում անթեղած, նրա հրացանի կրակոցին սպասելի՛ս...

Ես՝ երիցս խաբված ու խոցված թիկունքից, Հայրենի հրավեր սաղմոսելու ՏԱՃԱՐԱՋՈՒՐԿ եղեռնամայր, վերադարձի բոլոր ուղիները մարսած ու դատարկ ցմրո՛ր...

*** Երկրի ընդերքում հիմա ավելի շատ անկատար երազանքներ կան, քան երկրի վրա:

Աշխարհի ինչի՞ն էին պետք այսքան չքացված արշալույսները...

ԵՍ ԱՆՀԱՅՐԵՆԻՔ ԲՈՒ ԵՍ Ինձ՝ ամենատիրոջս, ինչպես՝ կարողացաք գրկել հանգրվակետերից:

Ինչպես՝ մեջս իրար խառնեցիք ցերեկ ու գիշեր, ստվեր ու լույս:

Ինչպես՝ գոյությունս հանգեցրիք անպատուհան փակուղու:

Հայրենիքս բռնաբարելուց առաջ՝ թեև քաղաքի, որ ամեն գիշեր, որպես միայնակ բու՛ չզգամ չթառեմ խծաբերողի Շենին գլխի սրբատեղիին ու չողբամ, չողբամ, չողբամ՝ յոթ սրբատեղիներիս պղծված շնչառությունը:

Ինձ Հայրենիքից գրկելուց առաջ՝ մթազնեիք գիտակցությունս, որ ամբողջ կյանքում սուրբ աղոթք պատարագած շրթունքներս հիմա չպղծվեն, այսպես չպղծվեն՝ դժխեմ անծեքներով:

Անզգա մարմին-հոգիների կռնչոցս չի հասնու՛մ:

*** Հիմա միայնակ մտած եմ խծաբերողի Հիմանի մարդկային Մեծ քարին՝ թափանցիկ շրթերի մեջ, ոտաբոբիկ:

Շուրջս համատարած ծյուն է, ոտքերս՝ ծյան ծերմակի մեջ, չեն մրսում:

Եմինի եւ Էդիտայի աղբյուրի ջրի մոլուցքից բարձրացող գուրջին շղարշում է մարմինս ու քերձացնում:

Գեոդարայի կածաններով մի նպատակադրված շղիկ վետիկետով Հարոսից գալիս հոտոտում է ակիս բազմաբուրությունը՝ տանելով այն Հարոսի ու Տումու անտառների՝ համոզելու նրանց, որ իրենց սմբած հավերժատիրուհու անպարտ հոգին դարձրել է թեւածելու է

իրենց վրա ու հուշելու է փրկության ԵԼՔԸ:

Հիմանի ծյունածածկ կածանով ինձ մոտ է իջնում Սահունասարի հինավուրց բերդի Իշխանը ու ուներիս է նետում դարերի անպարտության ծիրանին:

ԵՍ հավատում եմ՝ ԴԻՔ մի օր իրար եք գալու, Սասնա առյուծասիրտ ոյուցագուններ՝:

ԱՆՏԱՐԱԾՔ ԺԱՆՆԱԿ

Երբ օրը քսանչորս ժամ չէ, ու տարին՝ 365 կամ 366 օր:

Երբ ճանապարհը փաթաթվում է ոտքերիդ, քեզ ոչ տանում է, ոչ էլ բաց թողնում՝ ինքդ գնաս: Երբ քամին մոլեգնում է ոսկորներիդ մեջ եւ ոչ մի պահ

չի կորցնում թափը:

Երբ փողոցում անտուն մի շուն հոտոտում է փեշդ ու դառնահամից դուռը շրջում:

Երբ գետնամած տերեւների մեջ տաք աշունների ծանոթ բույր ես որոնում ու ձեռնուճայն համրանում:

Երբ մտքիդ մեջ փորձում ես վերագտնել անցած օրերի շքեղությունից գոնե մի պատահիկ ու ծախողված կարկանդակ:

Երբ ցավի ծիրաններին ընտելանում ես այնքան, որ նրանից դուրս գոյատևումը անհեթեթ է թվում ու էազուրկ:

Առողջ մարմնում՝ առողջ հոգի

ՄՊՈՐՏԸ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Ընթացիկ դպրոցական արծա- կուրդների շրջանում եւ մեկնարկող նոր ուսումնական տարվան ընդառաջ նպատակային ենք համարում խոսել կարեւորագույն թեմայի շուրջ, որն է՝ սպորտի դերը դպրոցականի կյանքում: Կեցության վայրի հաստատման, կենցաղային խնդիրների, ֆինանսական միջոցների հայթայթմանը զուգահեռ առկա են նաեւ ծանրաբեռնված օրերը ինչպես աշակերտների, այնպես էլ նրանց ծնողների համար: Երեխաներին դպրոց ուղարկելու, դասերից հետո պարապմունքների տանելու, տնային հանձնարարությունները կատարելիս օգնելու հոգսերից բացի կան նաեւ երեխաների հանգիստ ժամանցը, ֆիզիկական ակտիվությունը ճիշտ ապահովելու խնդիրներ:

Որոշ ծնողների համար երեխայի կենսակերպի մեջ սպորտային պարապմունքները պարտադիր մաս են: Այդ մտածելակերպն ունեցող ծնողներն ամեն ջանք գործադրում են սպորտը երեխայի դասերի հետ համատեղելու համար: Իսկ ոմանք ետին պլանում են դասում իրենց երեխայի ֆիզիկական ակտիվությունը՝ պատճառաբանելով, որ առանց այդ էլ երեխաները շատ են ծանրաբեռնված դասերով:

Իհարկե, դպրոցում անցնում են ֆիզկուլտուրա առարկա, որը որոշ ծնողների համար լավ պատրվակ է չգրադրվելու համար երեխայի ֆիզիկական դաստիարակության կազմակերպմամբ, հիմնավորելով, որ դպրոցում երեխան բավարար մարմնամարզությանը պարտադիր է: Դեպքեր էլ կան, որ երեխային ազատում են ֆիզկուլտուրայի դասերից այս կամ այն առողջական խնդիր վերագրելով՝ չցանկանալով լսել այն բազմաթիվ հորդորները, որ ֆիզկուլտուրան ու սպորտը լավագույն առողջարար միջոցներն են առողջ մարմնի ու նոր ձեւավորվող բնավորության համար:

Կերջին շրջանում շատ է խոսվել մարտարվեստների մասին, բայց մարմինն ու ոգին զարգացնելու միջոցը միայն մարտարվեստները չեն, գոյություն ունեն մի շարք մարզաձեւեր, որոնք ոչ միայն հետաքրքիր են, այլև օգտակար: Մարտարվեստի պարապմունքները կրթական առաջադիմության վրա միանգամայն դրական են ազդում: Մարտարվեստը ոչ միայն ֆիզիկական ակտիվություն է, այլև ինտելեկտուալ եւ հոգեւոր զարգացման միջոց: Բացի ֆիզիկական օգուտից, որը տալիս է մարտարվեստով ակտիվ պարապելը, մարզիկներն ստանում են նաեւ բարոյաէթիկական կրթություն եւ դաստիարակություն, դառնում են ավելի կարգապահ, կարողանում են իրենց ժամանակը ռացիոնալ բաշխել օրվա մեջ, վարում են առողջ ապրելակերպ, ինչը չի կարող դրական չափորոշանալ նրանց ուսումնառության վրա: Ֆիզիկական ակտիվությունը անհրաժեշտ է երեխային ֆիզիկական առողջությունը պահպանելու համար: Եթե երեխայի զբաղվածությունը լինի միայն դպրոց գնալը, տնային անձ-

մարարությունների կատարման համար դպրոցից հետո պարապմունքի գնալը, իսկ մնացած ժամանակը նա համակարգչի, կամ ժամանակակից այլ գրավիչ վնասակար սարքավորումներով խաղալու վրա վատնի, ապա կարող են մկանների, հեմաշարժիչ համակարգի խնդիրներ առաջանալ: Բռնցքամարտով պարբերաբար պարապելն օգնում է ամրացնել առողջությունը, բարելավում է հեմաշարժիչ համակարգի գործունեությունը, մկանային, արյունատար ու շնչառական համակարգերի աշխատանքը: Պարապմունքները դրական են ազդում օրգանիզմի նյութափոխանակմանը, օգնում են բալանսավորել քաշը, մարմինը դարձնում են ձգված ու համաչափ զարգացած: Սամբոյի պարապմունքները բարձրացնում են ճկունության մակարդակը, ուժը, դիմացկունությունը եւ ամրացնում առողջությունը: Իսկ սամբոյի գաղափարը սովորեցնում է արժանի վարքագիծ դրսևորել: Սամբոստները հարգում են մրցակիցներին, ազնիվ պայքարով են հաղթանակի հասնում եւ հասունանում են վստահելի պաշտպաններ, որոնք ի վիճակի են պաշտպանել ոչ միայն իրենց, այլև իրենց մտերիմներին: Լողավազան այցելելը բարձրացնում է օրգանիզմի տոնուսը, բարելավում է դիմացկունությունը, կատարելագործում է շարժումները, ամրացնում է նյարդային համակարգը: Քունը դառնում է ավելի ուժեղ, ակտիվացնում է

բարելավվում է: Պարբերաբար լողով զբաղվելը նպաստում է ոսկորների աճին եւ ամրացմանը: Այս ամենն ազդում է ներկայացվող «հիվանդության տեղեկանքների» քանակի նվազեցմանը: Ի՞նչ խորհուրդ է տրվում ծնողներին, որոնք իրենց երեխաներին մարզական պարապմունքների խմբակ չեն ներգրավում՝ չկարողանալով կարգավորել առանց այն էլ դասերով ծանրաբեռնված գրաֆիկը, կարծելով, որ երեխան չի հասցնի: Նման դիրքորոշում ունեցող ծնողները պարզապես միջոցներ են փնտրում արդարացնելու իրենց երեխայի կրթական ցածր առաջադիմությունը կամ պարզապես չեն գիտակցում սպորտի կարեւորությունը, փոխարեն՝ իրենց երեխաների ընդունակությունների բացահայտման, ինքնադրսևորվելու, առաջ գնալու հնարավորություններ փնտրելու: Փորձառու մարզիչները հաճախակի պահանջում են, որ մարզիկները ցույց տան իրենց օրագրերը: Լավ գնահատականները խրախուսվում են շատ մարզիչների կողմից: Քննարկում են, թե ինչպես են իրենց դրսևորում դպրոցում, ինչ վարքագիծ են ցույց տալիս: Մարզչի խրախուսանքն իր սաների համար լավագույն մոտիվացիան է, որն ստանալու համար մարզիկը շահագրգռված կսովորի դասերը: Եթե անուշադրության մատնվեն մարզիկի առօրյա խնդիրները, պարտականությունների կատարմանը հետևելն ու շահագրգռելը, ապա վաղ թե ուշ որոշ ծնողներ կվճռեն, որ ավե-

լի լավ է հանել երեխային մարզական խմբակից: Պարապող մարզիկը սպորտով չզբաղվող հասակակիցներից տարբերվում է կարգապահությամբ, օրվա ռեժիմի ճիշտ դասավորվածությամբ: Մարտարվեստով պարապող սաները սովորաբար առանձնանում են իրենց հանգիստ հոգեվիճակով: Հատկապես դեռահասության շրջանում բնականաբար առաջացող ագրեսիան իր սպառնում է ստանում մարտարվեստի միջոցով, ներքին էներգիան ճիշտ ուղղորդում է գտնում, մարզիկը դառնում է հոգեպես ներդաշնակ, կարողանում է կարճ ժամանակում ճիշտ որոշում գտնել ինչպես մենամարտերի ժամանակ, այնպես էլ իր առջեւ դրված ցանկացած խնդիր լուծելիս: Դպրոցում դասավանդվող ֆիզկուլտուրան անհրաժեշտ, բայց երեխայի զարգացման համար ոչ բավարար պայման է: Եթե ծնողներն իրենց երեխաներին չեն անդամագրում որեւէ սպորտային խմբակ կամ արգելում են նրանց պարապել, այդ դեպքում հնարավոր են բացասական հետևանքները: Կուտակված էներգիան սպառելու ելք չգտնելով՝ երեխան կարող է ձեռք բերել վնասակար սովորություններ, ընկնել վատ շրջապատ: Ուստի, չպետք է պատճառներ փնտրել, այլ գտնել հնարավորություններ երեխայի ֆիզիկական ակտիվությունը, մարզական պարապմունքների հաճախելն ապահովելու համար, ինչը միանգամայն դրական կազդի դպրոցում նրա առաջադիմության վրա:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՆՏԱՐԱՐ Հիմնադիր՝ ԽՍԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» կրթամշակութային ՀԿ Թ. Երևան, Անտառային փ. 188/16 ☎ 097-22-38-27 E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է «Լիմուշ» ՄՊԸ տպարանում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Տպաքանակ՝ 500 Ստորագրված է տպագրության՝ 15.08.2024թ.: